Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

355

Սիրիր թշնամիներդ

պատմություն.

Գաղտնիների կյանքից

82 Ս
Ա-55

Թիֆլիս
1869

378

82-93
Ս-55

ՍԻՐԻՐ ԹԵՆԱՄԻՆԵՐՈՒԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ՀԻՍՍԻՍԱՑԻՆ ԱՄԻԲԻԿԱՅՈՒՄ

Թարգմանեց Յ. Միրզաբէկեանց։

ԻՆՏԵՐՆԱ։

1869

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒԹԱՅ ԻՆՖԻՆԱՆԻԵԱՆՑ և ԸՆԿ.

6218

Дозволено Цензурою, Тифлисъ. 24-го Іюня 1869 года.

2004

82-93
U-55

Նուէր իւր ազգի սիրելի մանկտւոյն.

ՍԻՐԻ՛Ր ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒԴ

(Պատմութիւն գաղթականների կեանքից հիւսիսային Ամերիկայում)

ԳԼՈՒԽ Ա.

Մէկ գեղեցիկ ամառվայ երիկուն արեգակի վերջին ճառագայթները գունաւորում էին Ծիրանի և ոսկեայ գունով ըմբի հանդարտ մակերևոյթը, որը հաղիւ շարժում էր ափերի մօտ: Երբեմն էլ մեղմիկ հողմն վազովում էր նորա հանդիստը. նա փայլում էր. արդարև նորա մակերևոյթը վազովում էր.

միայն շուտ կրկին հարթանում էր ինչպէս հայելի: Եղանակն էր տաք և ախորժ, տաքութիւնն անցնում էր, և նրան փոխարինում զարմանալի հովութիւն, որով և շարժվել էին սկսում տերևները: Ափումը՝ տեսնվում էին թանձր կանաչ անտառներ, միայն մէկ տեղում բաժանված անտառից երևում էին գեղեցիկ սպիտակ փոքրիկ տներ, որոնք պարզապէս զանազանվում էին մոգ կանաչից: Հէնց նոյն ափումը կար մէկ շինութիւն, որնոր բարձրագոյն և մեծագոյն էր միւսներից, և շքեղապատած տնտեսական վերաբերութեամբ բարգաւաճեցրած և մշակած մրգեղէնների ընդարձակ այգիով: Երևում էր, որ տան տէր մարդիկը աղքատ չէին, այլ աշխատասէր և հոգացող: Արեգական ճառագայթները երևում էին այն տան փայլուն և մաքուր լուսամուտների վերայ. որոնք ներսից էլ նմանապէս գեղեցիկ էին և յարմար ինչպէս դրսից: Այդ ծաղ-

կափթիթ կալուածը պատկանում էր մէկ եօթանասուն տարեկան ծեր մարդու, որնոր դեռ առողջ և զուարթ էր: Նա իւր ամէն մատաղ և հասուն հասակը անցուցել էր անդադար գործունէութեամբ, և այժմ կարող էր հանգստանալ ծերութեան ժամանակ հանգիստ խղճմտանքով, որ անցուցել է իւր դարը ոչ առանց մի օգտի:

Ծերի անունն էր Մարկ Ըշարեկեր: Նա դուրս էր եկել պաշտամբի վերայ երեկոյեան զարմանալի օդը ծծելու, սիրով նայելու դէպի հանդարտ լեռը, դէպի հեռու սարերը և դէպի անտառը: Գործերը վերջացել էին, հանգստութեան ժամերը հասել, դաշտիցն էլ Ջանասէր մշակները, բոլոր ընտանիքը հաւաքվեցան միասին անցուցանելու օրվայ մնացորդը, մեծ տան պատշգամբի վերայ էլ դուրս էր եկել ծեր Մարկի որդին — Ավգուստինը, և իրա կինը վեց գեղեցիկ երեխայքովը, որոնք յարգելով իրանց

պապին շրջապատել էին նրան։ Սա փայփա-
յեց ամէնին, և հարցրեց, թէ ինչէն արել
նոքա, շատ են գործել, թէ ոչ, և նոցա ու-
րախ շատախօսութիւնը պարապեցրեց ու-
րախացնելով ծերին էլ։

—Ինչպիսի զարմանալի երեկոյ է, աղաղա-
կեց տասներեք տարեկան Իւլիան, որ կանգ-
նած էր պապի մօտ, — ինչպիսի գեղեցիկ
գրութիւն է, ես հաւատում եմ, որ աշ-
խարհքումը չկայ այնպիսի գեղեցիկ երկիր,
ինչպէս մերն է, ճշմարիտ չէ՞ արդեօք իմ պապ։

Ծերը ժպտալով շփեց երեխայի շիկա-
գոյն գլուխը և ասաց. —Եւրոպան մեծ է, և
նրանում կան շատ գեղեցիկ տեղեր, բայց
նա դեռ ես մեծ մասը չէ աշխարհի։ Ամե-
րիկան նշանաւոր չէ և կենդանագրական
կողմից ուրիշ աշխարհներից։

—Ամերիկան մենք ճանաչում ենք, աղա-
ղակեց Իւլիան,—նա մեր հայրենիքն է, մենք
ծնվել ենք այս տեղ։

—Այո. ես տեղ չէ ծնվել իմ հայրը՝
Ձեր նախահայրը, որը վաղուց հանգչում է
գերեզմանում։

—Ի՞նչու համար է եկել նա Ամերիկա,
հարցրեց Մարկի միւս թոռն,—ինչո՞ւ է թո-
ղել հայրենիքը, որ տեղ հենց ճշմարիտ լաւ է։

—Մենք ամէնքս էլ կ'երթանք, որտեղ
մեզ ցոյց կ'տայ ճակատագիրը, իմ պապն
էլ նմանապէս չմտածեց թողնել գերմա-
նիան, միայն հանգամանքը վճռեց ուրիշ
կերպ։ Նորա կեանքը կարող է օրինակ լի-
նել այլոց համար։ Նրանում կային շատ
անսովոր և խրատական բաներ։

—Պատմիր մեզ քո հօր վերայ, սիրելի
պապ, աղաղակեցին բոլոր երեխայքը միասին
խիստ մօտենալով դէպի ծերը։

Ծերը չմերժեց կատարելու թոռների
ցանկութիւնը, խմանալով, որ երեխայքը
սովորում են աւելի խօսակցութենից կամ
պատմութենից քան դրքից։ Նա նստաւ ա-

ւելի յարմար. երեխայքն էլ պատրաստվե-
ցան լսելու ուշադրութեամբ :

—Ութսուն տարի առաջ, սկսաւ նա,-մեկ
փոքրիկ գերմանական քաղաքում բնակվում
էր հարուստ վաճառական մարդ Ըշտրեկեր
անունով, որին յարգում էին ոչ այնքան նո-
րա հարստութեան պատճառով, որքան բա-
րութեան և պատրաստակամութեան հա-
մար ամենքին ծառայելու : Նա ապրում էր
հանդարտօրէն և բաստաւորութեամբ իւր
կնոջ իւր մեկ որդու և երեք աղջկանց հետ:
Որդու անունն էր Ավդուստին, ինչպէս ձեր
հօրը. նա էր ամենից երեխայ : Դեռ երեխա-
յութեան ժամանակը նա գերազանց էր իր
փութաջանութեամբ և ուշադրութեամբ,
մեծանալով ուրախացնում էր հօրը և զար-
մացնում ուսուցիչներուն իւր յառաջադի-
մութեամբը : Ամենեքեան գովում էին Ավ-
դուստինի անսովոր հնարքները, և խորհուրդ
էին տալի հօրը, որ նրան վաճառական չը-

շինէ, այլ տայ նրան համալսարան, ուր նա
կարող էր երևելի ուսեալ լինիլ : Ցիրաւի հենց
նրան շատ ցանկալի էր ուսումն, և նա ու-
րախացաւ, երբ յայտնեցին նրան, որ պէտք
է սովորի գիտութիւն, և պէտք է առնեն
նորա համար շատ գրքանք, ու խրկեն հա-
մալսարան :

Ավդուստինը ունէր առանձին սէր և
ձգտումն դէպի բժշկականութիւնը, նորա
հայրն էլ նմանապէս յարգում էր այդ աշ-
հատը, որ փրկում է մարդկանց չարչա-
բանքից : Մայրը կարծում էր, որ իւր որ-
դին կ'լինի երևելի բժշիկ, որ ամենքն կ'դառ-
նան դէպի նա օգնութեան համար, կ'օրհ-
նեն, ինքն էլ կ'լինի կատարեալ բաղդաւոր :
Այս ամէն յոյսերը այն մատաղ մարդու, որ
նստած էր գիրքը ձեռին, պէտք է փշի դառ-
նային, որովհետև նրան սպասում էր ամե-
նեին ուրիշ վիճակ :

Ավդուստինը արդէն վերջացնում էր բժ-

շկանութեան ընթացքը համաչափանե-
րից մէկի մէջ, ահա յանկարծ ստացաւ տը-
նից լուր, որ արտաքսեց նրան: Սուրհան-
դակը բերաւ նորա փոքրիկ սենեակը մէկ սև
կնքով ծրար... Նորա ձեռները դողացին, երբ
բացեց կնիքը, աչքերը մթնացան արտասու-
քից: Մի քանի տող գրված էին նորա մօր
ձեռքով:

„Իմ որդի, գրել էր նա—արի, եկ շու-
տով, քո հայրը մնանկացաւ, նրան խաբեց
բարեկամներից մէկը, որին յանձնել էր բոլոր
կարողութիւնը: Նա չ'կարացաւ տանել այդ
հարուածին ու մեռաւ: Ցերը բարկացել է
մեր վերայ. մենք ինչպէս տանենք այդ տա-
բաբախութեանը:

Խեղճ Ավգուստինը չ'մտածեց երկար, և
չ'մտանեց իրան յուսահատութեան. Նա հա-
ւաքեց շուտով իր կայքը, և ուղևորեցաւ
դէպի տուն: Ինչպէս տրտմալի էր ամէն բան
այդ տան մէջ, որ թողել էր ուրախութեամբ:

Քոյրերը եղբօրը առաջ դուրս եկան արտ-
ասուք թափելով. պառաւ մայրը միայն հա-
ռաջումէր, և չէր կարողանում ասել ոչ մի
խօսք տրամութեան խռովութենից: Մա-
տաղ ստուտենտը զրկեց ազգականներուն, և
հօր վերայ մտածելիս, որին նա շատ էր սի-
րում ու այլ ևս չէր տեսնում, չէր կարողա-
նում զսպել իր բարձր հեծկլտանքը:

Միայն պարտ էր պարապել այնպիսի
գործով, որ կանայք չէին կարող անել:
Տրամութենից մի փոքր ուշաթերված Ավ-
գուստինը սկսաւ քննել հօր թղթերը և
գրքերը, և համոզվեցաւ, որ բոլորը ոչընչացրած
է: Բարեկամը, որին Մարդին Ըշարեկերը
յանձնել էր իւր ամէն կարողութիւնը, յայտ-
նըվել է ուրացող. և թաղնվել է գիշերը մէկ
անյայտ տեղում հաւաքելով իւր բոլոր փո-
ղերը: Նրան երկար ժամանակ որոնել են, բայց
նա այնպէս է անյայտացել, որ անկարելի է
եղել գտնելու անգամ նորա հետքը: Նա ե-

ղել է այդ վաճառականի հին բարեկամը, ո-
րին շատ անգամ է յանձնել Մարտին Ըշտ-
ըեկերը մեծ գումարներ, որ դարձրել է ճշ-
տութեամբ։ Նրանն է եղել ծերի կարողու-
թեան քիչ մասը, բայց բոլորն կամեցել է
յափշտակել, ուստի սպասել էր, որ Ըշտրե-
կերը հաւատայ նորա պատուին, և տայ նը-
րան իւր բոլոր դրամագլուխը մի ինչպիսի և
իցէ հարկաւոր գործառնութեան համար։
Փոխանակ օգտի այդ աւազակը թողել է այդ
բարի և հաւատարիմ կարդկանց բոլոր կա-
րողութիւնից մի ադքատիկ գումար։ Մար-
տինի համար հարուած եղաւ ոչ այնքան
կարողութեան կորուստը որքան միտքը, որ
ինքն էլ չէր կարող վաստակել նոր կարո-
ղութիւն և անհոգ առնել իւր ընտանիքը։
Ծերը հիւանդացաւ կարճ միջոցում ու մե-
ռաւ, որովհետև էլ չկարողացաւ յուսալ
մարդկանց վերայ։

Ավգուստինը յոյս ունէր, թէ այդ կո-

բուստից ինչ և իցէ մնացած կ'լինի մի բան,
որով նոցա դրութիւնը այնպէս անյոյս չի
լինիլ, սակայն և այդ յոյսը 'ի զուր եղաւ։
Փնտռելով գործը, նա տեսաւ որ մնում է միայն
ինքն պաշտպան իւր մօրը և մատաղ քոյրե-
րին. պէտք էր այնուհետև աշխատել մի
կտոր հացի համար։ Որքան որոնեց նա թըղ-
թերի մէջ, որքան վերատուգեց հաշուոյ
մատեանները, ոչ մի տեղ էլ չերևեցաւ մի
հետք, որ ծերը լինէր մի տեղ դրած որ
և իցէ գումար։ Նրան յաջողեցաւ միայն
ժողովել մի փոքր բան հին պարտքերից։
Բայց այդ գումարով ընտանիքը կարող էր
կառավարվել ամենահարկաւոր տնտեսութե-
նով միայն երկու տարի և ոչ աւելի։ Իւր
ուսումն վերջացնելու համար էլ հոգացո-
ղութիւն չեղաւ, ապա մայրը և քոյրերը
պարտաւոր էին խմանալ վերջը, և թէպէտ
այդ դառն էր Ավգուստինի համար, զլկը-
վում էր ապադայ փայլուն առպարիզից, բայց

նա առանց տրտնջանաց հնազանդեցաւ իւր ճակատագրին: Նորա ծեր մայրն էլ արտասուցաւ նրանից աւելի:

—Իմ խղճուկ զաւակ, կրկնեց նա, սրբելով արտասուքը.—Դու ի՞նչ կ'լինես: Ա՛խ, ինչպէս դու ջանասիրութեամբ կարդում էիր. ինչպէս քեզ գովում էին, և այդ ամէնը կը լինի արդէն կորցրած, ամէնը զուր եղաւ, էլ չես կարող վերջացնել ուսմանդ ընթացքը:

Միամիտ եղի՛ր մայրի՛կ, պատասխանեց մատաղ որդին, արտաքուստ հաստատութեամբ թէպէտ նորա սիրտը շատ սաստիկ բախում էր ցաւից.—ինչոր սովորել եմ, այն չեմ մոռանալ, կարելի է, որ երբ և իցէ կը հարկաւորի ինձ: Անարժան տարաբախտութիւնը կ'կազդուրէ ինձ, և կ'տայ ինձ կարողութիւն նոր ջանքի համար: Ես մատաղահաս եմ, բայց առողջ, մի՞թէ չեմ գտնիլ գործ, որով կարողանայինք կառավարվել ամէնքս էլ: Մենք չենք պահանջում աւելի,

ես կամենում եմ այնքան, որ դուք և քոյրերս չզրան պակասութիւն:

Ավգուստինի բարեմիտ խօսքերը միամտացրին մի փոքր ողորմելի մօրը: Նա յուսացաւ, որ շուտով իրանց գործը կ'կարգաւորվի, և զոհացաւ ջերմեռանդութեամբ որդուցը: Ավգուստինը գնաց հանգուցեալ հօր բարեկամների մօտ, և խնդրեց ամէնքից իրա համար բարի խորհուրդ, թէ ինչ անէ, բայց ոչոք գտաւ նրան օգնական: Նա որոնեց ուսուցչի կամ կառավարողի տեղ, սակայն մատաղ էր տակաւին և անհմուտ, ուստի չկամեցան յանձնել նրան դեռ ևս պաշտօն, և խնդրեցին սպասել: Նա մի՞թէ կարող էր սպասել, երբ հարկաւորութիւնը բախում էր նորա դուռը: Վերջապէս գտաւ նա մեծ ջանքով մեկ հեշտ գործ: Նրան տալիս էին թղթեր պարզագրելու, և հատուցանում էին այնքան սակաւ, որ բնաւ բաւական չէր կառավարութեան համար. բայց

նա ուրախ էր դրանով։

Մի անգամ իրիկուն նստած էր սեղանի վերայ, և գիր էր գրում. վերջացնելով գիրը, խոնարհեցրեց գլուխը։ Կիսայրեաց մոմի աղօտ լոյսը լուսաւորում էր երիտասարդի բաղմահոգ դէմքի գծագրութիւնը, որը ընկնում էր զօրութենից ստանալու համար աւելորդ կոպէկ։ Եւ ինչ կ'սպասէր նրան ապագայում։ Սակաւ գրամը, որ ժողովել էր, վերջացաւ, էլ նա չ'որոնեց ոչ մի հաստատ պարապմունք, որ կարողանար անհոգ առնել իւր ընտանիքը։ Դժուար է ողորմելիներին գտնել մի կոր հաց, մանաւանդ երբ սպառնում է սովը։ Այդ մտքերը շուարացրին Ավգուստինին։ Նա վերկացաւ հանդարտօրէն, որ չ'զարթեցնէ քնած մօրը, գնաց իւր հօր առանձնասենեակը, և նոր 'ի նորոյ սկսաւ անտղել առևտրական մատեանները, որ էլն գանէ ինչպիսի և իցէ մոռացած պարտք։ Բայց 'ի զուր նա վեր 'ի վերոյ ա-

րեց ճիշդ հաշիւները և համարները, ոչինչ կարողացաւ գտնել նրանցում և բարկութենով դրաւ մատեանները պահարանի մէջ, որ էլ չ'երևին աւելի իրա աչքին։ Բայց մեծ մատեանները չ'էին ստուգվել, ճշմարիտ որ խառնեց նրանց Ավգուստինը, անտղեց, ուրեմն եղաւ մեատղեայ արկղի ձայն, այդ մատաղահասի սիրտը սաստիկ հարկանվում էր։ Նա գցեց մատեանը տախտակամածի վերայ, ձգեց ձեռը մինչև պահարանի պատը, շոշափեց այն տեղ մէկ մեատղեայ նիւթ, և շտապեց դուրս հանել նրան։ Այդ էր փոքրիկ արկղ, բանալին էր իւր վերայ։

Ցնցողական շարժողութենով բացեց արկղը, և նորա աչքերը յուսով ողողում էին նրանում գանձ, սակայն նա սխալվեց։ Ոսկու տեղ արկղումն կային թղթեր, մագաղաթ, և ուրիշ ոչինչ։ Ավգուստինը դրաւ այդ ամէնը սեղանի վերայ, և սկսաւ խօսել ծանր ժպտով։

—Միայն թղթեր են, ահա դրանով ես չեմ կարող կառավարել մարս և քոյրերիս:

Նա կամեցաւ արդէն դէն գցել այդ թղթերը մէկ անկիւնում միասին արկղովը, սակայն հետաքրքրութիւնը չ'թոյլ տուեց նրան: Նա տեսաւ, որ թղթերը գրված են անգղերէն, և որովհետև գիտէր այդ լեզուն, ուստի կամեցաւ կարդալ ինչոր գրված էր:

—Ինչպէս են պատահել այդ անգղերէն թղթերը իմ հանդուցեալ հօրս, մտածեց նա,—ես չեմ լսել, որ նա երբ և իցէ գործ ունենար անգղացւոց հետ: Դա տեսնված չէ:

Նա որոշեց թղթերը, և սկսաւ կարդալ, սկզբումը անտարբերաբար, բայց յետոյ ուշադրութեամբ, վերջացաւ ամենասաստիկ հետաքրքրութեամբ: Արիւնը շարժեցաւ դէպի նորա երեսը, աչքերը փայլեցին, նա դեռ նայում էր մատեանին, երբ կիսայրեաց մումը վերջանում էր, և բոցը ճռճռալով անցնում:

—Ինչպիսի նեղութիւն, աղաղակեց Ավդուստինը—հասայ մինչև այն հետաքրքրական տեղը, որտեղ կ'տայ իմ ողորմելի մարս կարօտութենից ազատութեան յոյս, էլ մոռացեալը չեմ կարող կարդալ, որովհետև տեսնեմ արդեօք կ'գտնուի խոհանոցումը մէկ կտոր ինչպիսի և իցէ մոմ:

Նա զգուշութեամբ գնաց խոհանոցը, փարախափեց ձեռքով սեղանը, և տախտակամածը, բայց ոչ մի տեղ չ'կարողացաւ գտնել այն, ինչոր հարկաւոր էր իրան:

—Ուրեմն պէտք է մնայ մինչև առաւօտ, ասաց նա հոգոց հանելով, ընկնեմ քնելու:

Նա գնաց կրկին առանձնասենեակը, հաւաքեց այն մթին տեղում թղթերը, և դրաւ արկղի մէջ ու բերաւ սենեակը: Երկար ժամանակ անցաւ, չ'կարաց նա քնելու մտածելով իւր գլուխի վերայ, և երբ ննջեց, անսովոր երազները շփոթեցին նրան: Նա տեսաւ մէկ կախարդական կողմն անչափ ան-

տառներով, որոց մէջ թափառումէին անսովոր անասուններ, թռչումէին գեղեցիկ թռչուններ ամենապայծառ ծաղկունքների վերայ: Նա դժուարութեամբ անցնումէ այդ դատարկ անտառները, որոց ճիւղերը հիւսված մէկզմէկու հետ բարկացնումէին կանաչեայ թաղ, որ հաղիւ թէ թափանցումէին արեգական ճառագայթները: Վերջապէս նա դուրս եկաւ մէկ լայն դաշտ, որ ոռոգվումէր մի վճիտ գետով, հեռու երևումէին սարեր, բնութիւնը երևումէր վայրի, բայց կախարդական:

Շուտով Ավգուստինը սկսաւ մտածել, որ այդ կենդանագրական աեղումը թափառումեն վայրենիք, ահարկու գազաններ, փայլուն աչքերով, սուր ժանիքներով, որք անընդհատ կերպով կ'մոտենան իրան: Այդ մտաղ մարդոյ սիրտը հարկանումէր սատակվելս, բայց գազանները յանկարծ անհետանումէին, ինքն յանկարծ երևեցաւ

մէկ կախարդական այգոյ մէջ, որը լեցն էր ծաղկունքներով, վճիտ գետով և լուսաւորված արեգական պայծառ ճառագայթներով: Ավգուստինը փորձեց բռնելու մէկ թռչուն, ուստի ձեռը ձգեց դէպի ծաղիկը, որի վերայ նստած էր նա, բայց հենց այդ բոպէին զարթեցաւ: Ամենեին լոյս էր, և արեգակը լուսաւորել էր նորա սենեակը պայծառ ճառագայթներով:

—Դա ի՞նչ անսովոր երազ էր, ասաց նա շփելով իւր աչքերը, և ինչեր էր այս: Ահա այս դա երեկվայ թղթերն են, ուրեմն հարկաւոր է մինչև վերջը կարդալ նրանց:

Նա շուտով հանդնվեցաւ, և վեր առաւ երկթեայ արկղը, ու շարունակեց կարդալ ուշադրութեամբ թղթերը. վեր-

Ջայնելով վերջին թերթը, մաՀեց նա, և յետոյ ասաց ինքն ինքեան՝

—Դա կարելի է թանկագին գիւտ լինի, եթէ ես խոհեմութեամբ շահվեմ դրանից, կ'երթամ խորհուրդ կանեմ մօտս հետ։

Թաղցնելով զգուշութեամբ թղթերը, գնաց մօր մօտ, որնոր արդէն պարապում էր սնտեսութենով և ասաց՝

Լսել է՞ք մայր իմ, որ իմ հայրս եղբայր է ունեցել։

—Ինչպէս չէ, Ներան կոչում էին Դիտրեխ. նա մտաւոր հասակումը հեռացել է ազգականներից։ Քո հանդուցեալ հայրդ շատ անգամ է պատմել մեզ նորա համար։ Նա մի անմահ երեխայ էր, անկախ և արժանաւոր բնութենով. նա գնացել է Ամերիկա, մտել է այն տեղ զինուորական ծառայութիւն, նա երևելի է եղել պատերազմի մէջ Ամերիկայի անկախութեան համար, և եղել է գործավար օֆիցերների մէջ։ Նա այլ ևս չէ վերադարձել

իւր հայրենիքը, այլ մեռել է օտարութեան մէջ։ Տասն տարի առաջ բերին մեզ համար մէկ երկաթեայ արկղ, մէջը լի թղթերով, որոնք տուած է եղել Դիտրեխից։ Հայրդ դրել է նրան չ'գիտեմ մէկ տեղ և յիրաւի մոռացել եմ։

—Ես գտել եմ երեկ այդ արկղը, մայր իմ, գնելով թղթերը նոցա մէջ գտել եմ մեր հօր եղբօր Դիտրեխի օրագիրը։ Նորա վիճակը ամենևին տխուր չէ եղել։ Նա եղել է երևելի օֆիցեր, և ստացել է պարգևներ իւր ծառայութեան համար։ Թղթերի միջում կայ վկայագիր մագաղաթի վերայ Անգղլերէն գրած։ Ամերիկայում Անգղլացոց նահանգի Գուբերնատորը շնորհել է կապիտան Դիտրեխ Ըշարեկերին յորդւոց յորդի մէկ երկիր, որ բաւական տեղ է։ Այն տեղ է և այդ կալուածի ցուցակաթուղթը, որ կարող է հաւատարիլ Գերմանացոց ընտիր դբսի երկրին։ Այդ երկիրը այժմ

պատկանում է մեզ, մայր իմ, որովհետև մենք ժառանգ ենք մեր հօրեղբօր, որը մահից առաջ գրել է օրինաւոր կտակ: Դա մեծ բախտաւորութիւն է մեզ համար, մենք տիրապետող կ'լինենք մեծադիր կայքի:

Պառաւ մայրը շարժեց գլուխը:— Եթէ այդ թղթերը ճշմարտապէս կարողանային բերել մեզ համար օգուտ, ասաց մայրը, քո հայրը չէր գնա գցել գրանց, գու զուր կ'խաբես քեզ յուսով, սիրելի Ավգուստին:

— Ինչու չ'յուսանք, ազատակից ոգևորած Ավգուստինը,— ես հասկանում եմ, որ հանգուցեալ հայրս չէ հասկացել, թէ ինչպիսի մի օգուտ է այդ ժառանգութիւնը, ապա թէ ոչ նա պէտք է գնեն գցել էր ամենը և գնար Ամերիկա, ու այն տեղ հոգս անէր: Բայց ճշմարիտը մեզ յայտնի է, և ոչ ոք կարող է վեր առնել մեզնից մեր հօր եղբօր ժառանգութիւնը: Մեր հայրը պարապած է եղել իր գործերով, բայց ես չեմ կարո-

զանում դանել պարապմունք, որ կարողանամ կերակրել ձեզ և քոյրերիս: Ես չը-պէտք է արհամարհեմ ոչ մի բան, որ բաւական ձեր գրութիւնը: Այս տեղ մենք հազիւ թէ ունենում ենք մի կտոր հաց, իսկ այն տեղ կ'լինենք տիրապետող գեղեցիկ պտղատու երկրի, որտեղ կ'լինի մեր նոր հայրենիքը, և գու կանցուցանես պառաւութիւնդ բաւականութեամբ և բախտաւորութեամբ: Ես շատ ցանկանում եմ այդ վիճակը քեզ համար ձեռք բերել:

— Դու սիրելի որդի ես, նկատեց շարժված մայրը զրկելով որդուն:— Ես արդէն բախտաւոր եմ գրանով, որ ունիմ այդպիսի ազնիւ որդի: Բայց ես կարծում եմ ըստ ամենայնի, որ քո յոյսը զուր է: Մտածիր, թէ որքան երկիւղներ, որքան արգելքներ պէտք է յաղթահարել, որ կատարվի քո դիտաւորութիւնը: Դու դեռ մատաղահաս ես, ինչպէս ես կարող մենակ գնալ այդպիսի

հեռու տեղ, վայրենեաց մեջ։ Եթէ դու երկիր էլ ստանաս, որ թողել է քո հօրեղբայրը, կ'տեսնես, որ անապատ է դարձել, որն որ հարկաւոր է գործել, բայց մենք չունենք հնարք կամ միջոց, այնքան փող, որով դու պէտք է գնաս հասնես այն տեղ։

— Բայց այս տեղ իմ ապագան ի՞նչ պէտք է լինի։ Ես չեմ աւարտել իմ ուսմանս ընթացքը. միայն կարող եմ խղճալի պարզաղրող լինել, որ հազիւ-թէ տալիս է մեզ մի կտոր հաց։ Ո՛չ, մի արգելիր ինձ, չպէտք է կորցնեմ, և ինչու համար չփորձեմ։ Ինձ համար կ'լինի ծանր միայն ձեզ թողնելը, բայց անջատվելս երկար ժամանակ չի լինիլ, և մենք կրկին կ'միանանք։

— Ուրեմն հնարք և միջոց է հարկաւոր, մենք ո՞ր տեղից գտնենք դրան, սիրելի Ավդուսին, ահա այդ մեջ ճանապարհն է, դու ինչով կերթաս այն տեղ, ես և քո քոյրերը ինչով պէտք է ապրենք։ Ո՛չ, դու

մտածում ես անկարելի բան։

— Ես կարդի կ'դցեմ ամէնը, ահա մեզ մնացել է այս տունը, սրան կ'ծախենք։ Այդ դումարը բաւական է. որ դուք ապրիք երկու կամ երեք տարի, իմ ճանապարհի ծախքի համար քիչ է հարկաւոր։ Նիւ-Եորքում ես կ'լինեմ հարուստ։ Ես տակաւին չեմ ասել քեզ, որ հօրեղբօրս թղթերի միջում էլի կայ մեկ թանկագին վկայագիր։ Այդ վերկայական է, որ մեր հօրեղբայր Դիմիտրեսը դրել է այնտեղ բանկում երկու հազար դոլլեր և կտակել է նմանապէս հանդուցեալ հօրս։ Դու տեսնում ես մայրիկ այդ ներկայ հարստութիւնը, որով մենք երկար ժամանակ կ'կառավարվենք։ Ո՛չ թէ միայն ճանապարհորդութիւնը կ'լինի հատուցված, այլև կարող ենք կարգաւորել բոլորը մեր երկրում։ Ցիրաւի, մայր իմ, այդ արկղը մեր տգաութիւնն է, և մենք չպէտք է դրան արհամարհենք։ Ես կ'կատարեմ ամէնը, ինչ որ

մտածել եմ մեր ապագայ կառավարութեան համար։

Մտածիր իմ որդի, ինչպիսի երկար և երկիւղալի ճանապարհորդութիւն է կանգնած առաջիդ։ Ես մէկ բոպէ հանգիստ չեմ լինելու, իմանալով, որ կարող է պատահել նաւակոծութիւն, փոթորիկ... որ իմ որդիս արդեօք կ'ընկղմի...

— Ուրեմն ամենեքեան, որոնք ուղևորվում են դէպի Ամերիկա, ընկղմում են։ Միամիտ կայ, մայր իմ, և յաւասցիր, ամէնը կը ուղղուի դէպի լաւը։

Այդ մտապահասի միամտութիւնը և հաստատութիւնը մի փոքր հանգստացրին մօրը։ Նա վառած գրկեց որդուն, և տաց արտասուքով։

— Այո, բախտաւորութիւնը չի թողնիլ այդպիսի ազնիւ և զուսանի որդուս։ Գնա, իմ որդի, ես հանգիստ կ'սպասեմ քո դարձին։

Նոր կարողութիւնով սկսաւ մտապահասը մտածել իւր դիտաւորութեան վերայ, և կարգի գցել ճանապարհորդութիւնը դէպի Ամերիկա։ Ամենից առաջ հոգաց ապահովելու մօր և քոյրերի վիճակը իրա բացակայութեան ժամանակ։ Իրա համար աւելի չէր մտածում. բայց երիտասարդական անհմտութենով երևակայում էր, թէ իւր ձեռնարկութիւնը յաջողակէս առաջ կերթայ, որ նա չի պատահիլ ոչ մի արգելանաց, որովհետև իր կողմանից են ճշմարտութիւնը և անբասնալի իրաւունքը։

Այդ միամտութիւնը մարդկանց մէջ պաշտպանել է իրան։ Ամենից առաջ, նա յայտնեց որ ծախում էր իր հայրական տունը և բանտարկը գտաւ շուտով առնող, որնոր աւելի գին տուեց. որով աւելացաւ Բշարեկերի այրի կնոջ յոյսը։ Այս սկիզբը ուրախացրեց ամէնքին. մայրը և քոյրերը սկսան զարդարել Ավգուստինին ուղևորութեան համար։ Ծանր էր նրան համար թողնել ազ-

գականներուն, հայրենիքը, բայց Ներան կաղ-
դուրեց միաբը. թէ շուտով կարող կ'լինի
ինքը ապահովելու մօրը և քոյրերին. այս-
պէս ուղևորվում է նա բարեմաղթութեամբ
և արտասուօք :

ԳԼՈՒԽ Բ.

Ավգուստինը գնաց Բրեմեն, որ մեծ վա-
ճառաշահ քաղաք է, ուր կային շատ նա-
ւեր, որոնցով կարելի էր ուղևորվել աշխար-
հի դէպի ամէն մասերը: Կամեցաւ տեղեկա-
նալ թէ Ներանցից որն է գնալու Ամերիկա: Հէնց
այդ ժամանակումը Եւրոպայի և Նոր աշ-

խարհի մէջ լային ոչ պակաս երկիւղներ :
Ավգուստինը խմացաւ, որ մի մեծ վաճառա-
կանական նաւ ճանապարհորդելու է այն օ-
րերում դէպի Նիւ—Եօրք, գնաց որոնելու
նաւապետին, որ խօսի Նորա հետ :

Նաւապետը էր հմուտ և չափահաս
ծովագնաց, որնոր այրվել էր սաստիկ հարա-
ւային արեգակից : Նորա աչքերում բարու-
թիւնը փայլում էր, ով զորձ էր ունեցել
նաւապետ Սատինգի հետ, վկայում էր, որ
մաքուր, ճշմարիտ և հաստատարարոյ մարդ է:
Նա կարողանում էր հաւատարմութիւն ազ-
դել իւր ճանապարհորդակիցների մէջ մին-
չև անգամ ամենասասիկ փոթորկի ժամա-
նակը, երբ որ ամէնին տիրում էր երկիւղը և
յուսահատութիւնը, ոչ ոք համարձակվում
չէր անհնազանդ լինել նաւապետին և յետ
կանգնել Նորա հրամանից :

Ավգուստինը գտաւ Ներան իջևանի մէջ
ծովի ափում, ձեռին մի բաժակ դինի բրու-

նած։ Ծեր Ծովագնացը նստել էր լուսամտի վերայ, և զուարճանում էր նայելով դէպի իւր նաւը, որ կոչվում էր „Կարոլինա“ որ կանգնած էր նաւահանգստում։

— Ի՞նչ է հարկաւոր Ձեզ, պատանի, հարցրեց նա Ավգուստինից, երբ որ Ավգուստինը յայտնեց թէ բան ունի խօսելու նորա հետ։

— Ես կամենում եմ ճանապարհել դէպի Ամերիկա, պատասխանեց նա հաստատապէս. բայց սիրտը սաստիկ բաբախում էր։

— Ա.հա ինչ եմ ասում. հարկաւոր է պատրաստվել շուտով, որովհետև „Կարոլինան“ (նաւը) վաղը ճանապարհ կ'ընկնի, թէ հողմը չ'փոխարկի, ուրեմն բերէք ձեր կայքը նաւի մէջ, և հատուցէք ութսուն և հինգ տալեր (մէկ տալեր հաւասար է 93 կոպ. արծ.) և կարող էք այժմ տեղ ունենալ։

Ա.յս խօսքը, որ է ութսուն և հինգ տալեր, զարմացրեց Ավգուստինին. նա ամենևին մտածել չէր, թէ մինչև Նիւ—Եօրք այնքան թանկ կ'լիներ. այդ պատճառով էլ նա ճանապարհի ծախքի համար քիչ փող էր վերցրել և մնացածը թողել էր մօր և քոյրերի համար։ Խոնարհեցնելով գլուխը արտում սկսաւ խօսել։

— Ես չունեմ կարողութիւն այդ գումարը հատուցանելու... չեմ կարող արդեօք գործել ինչպիսի և իցէ գործ նաւումը, որ օգուտ լինի...

Նաւապետը սեղմեց Ավգուստինի ուսը, և նայելով հարկագրաբար այդ գեղեցկին պատասխանեց քաղցրութեամբ.

— Ես տէրը չեմ „Կարոլինայի“ և չեմ կարող պակասացնել գինը, որ նշանակված է ամէնի համար։ Լաւ է քեզ համար մնալ Եւրոպայում, եթէ չես կարող հատուցանել ութսուն և հինգ տալերը.

Ավգուստինը կարող էր հատուցանել այդ գումարը, միայն մտածում էր, որ եթէ Ամերիկայում նա պատահի ճախորդութեան,

ապա էլ չէ կարող յետ դառնալ դէպի մայրը, և կարելի է, որ էլ նրան չտեսնէ: Ադոպիսի մոռածմանց մէջ նորա աչքերը լցուեցան արտասուքով, ինքն էլ շշնջելով ասում էր—խղճալի մայրիկ:

Այս խօսքերը շարժեցին նաւապետին, երբ որ լսեց: Նա սկսաւ զթալ այդ խեղճ պատանեակի վերայ տեսնելով նորա պարզ և յարգելի հայեցուածքը, եւ այն թէ ինչպիսի քնքոյշ կերպով սիրում էր իւր մօրը, ուստի կամեցաւ նրան օգնել:

— Լսիր սիրելիդ իմ, ասաց նա յօժարակամ—ասա, ինչո՞ւ համար ես գնում Ամերիկա. եթէ միայն ծածուկ չէ այդ: Ես եղել եմ այնտեղ շատ ժամանակ, ճանաչում եմ շատ Ամերիկացիներու, և կարող եմ տալ քեզ լաւ խորհուրդ: Ես ծեր եմ, բայց դու մտադրհաս, կարելի է, որ քեզնից աւելի հմուտ լինեմ: Մի մոռածիր, թէ հարցնում եմ քեզ հետաքրքրութենից,

դու ինձ պարզապէս իմացիր:

Նաւապետի խօսքերը արտաշնչվում էին բարութենով, և Ավգուստինը պարզապէս պատմեց նրան իւր պատմութիւնը: Ծովագնացը լսում էր ուշադրութենով, որպէս թէ սովորում է նրանից, և երբ վերջացրեց, նա պինդ սեղմեց նորա ձեռքը աւելացնելով այս խօսքերը.

— Դու լաւ մարդ ես: Ցոյց տուր ինձ այժմ քո հօրեղբօր թղթերը, ես կիմանամ այդ բանի միտքը, և կարող եմ քեզ ասել, թէ արդեօք ճշմարիտ են այդ վիճակագիրները, և յոյս կայ արդեօք ստանալ ինչ և իցէ: Ահա դու ոչ օրի հետ խորհուրդ չես տեսել, բացի մօրիցդ, որ չէ կարող շատ բան հասկանալ: Ցիմարաբար և զուր կլինի գնալդ Ամերիկա, եթէ մի յոյս չկայ այդ գործքի յառաջադիմութեան վերայ:

Թղթերը Ավգուստինի զրպանումն էին,

նա իսկոյն տուեց Նաւապետին — Ստեփանդին որնոր ուշադրութեամբ նայեցաւ և ասաց.

Այդ վկայագիրները օրինաւոր և ճշմարիտ են. նորա նամակները ամէնը կասկածելի են... բայց մի՛ մտածիր. մատաղ բարեկամ, թէ այդ ամէնը հեշտութեամբ կատարվի: Այնտեղ շատ փող և շատ հոգացողութիւն է հարկաւոր: Այժմ դու չես կարողանում հատուցանել և ճանապարհի ծախքը: Հարկաւոր է լաւ մտածել, թէ ինչպէս պէտք է սկսել գործը: Ցերունին իւր ձեռքերը նեցուկ դրաւ իւր ալեզարդ գլխին. Ավդուստինն էլ զգում էր իւր ընչաւորութիւնը, սպասելով անհամբերութեամբ, թէ ինչ է ասելու այդ բարի մարդը. որ դէպի նա զգացել էր մի այնպիսի սէր, ինչպէս դէպի հարազատ իւր ազգականը:

— Լսիր պատանի, ասաց նա, բարձրացնելով, գլուխը-ով կըսիրէ մօրը այնպէս ջերմեռանդութեամբ ինչպէս դու, նա համարձակ կարող է ովկիանոսների վրայով անցնել, որ կարողանայ հասուցանել նրան կենցաղավարութեան միջոց: Հենց միայն դրանից կարելի է դատել, որ դու օրինաւոր մարդ կ'լինիս և կը հանիս քո նպատակիդ: Ես կամենում եմ օգնել քեզ ինչով կարող եմ: Դու զուարճացիր մի փոքր այս նաւահանգստում, ես կ'աշխատեմ քո գործիդ համար. դու՝ սպասիր ինձ, մի ժամից յետ կը դառնամ, և կարելի է ուրախ համբաւով:

Գոհանալով նրանից Ավդուստինը խոստացաւ սպասել նորա դարձին, և գնաց նաւահանգիստը „Կարոլինան“ անտեսելու, որով ցանկանում էր ճանապարհորդել: Եթէ „Կարոլինան“ գնար առանց նորա. նա պէտք է սպասէր երկար ժամանակ, և միայն այն քաղաքում ուրիշ նաւի երթալուն, որով անշուշտ կ'պակասէր և նորա փոքրիկ գումարը: Եթէ բարի Ստեփանդին յաջողվի, կարող կ'լինէր էժան գնով ճանապարհորդել: Այս

մաքերով ման էր գալիս ծովի ափումը, և անհամբերութեամբ սպասում էր նաւապետի պատասխանին: Նորա մօտով անց ու դարձ էին անում շատ նաւասաներ. որովհետև նաւահանգստում կանգնած էին շատ նաւեր. որոնք վեր էին առնում կամ դուրս էին բերում զանազան ապրանք:

Ա.յդ անդադար շարժմունքը, տեսակ տեսակ դէմքերը, մէկը թուխ, միւսը սպիտակ, և բազմաթիւ մակոյկները, որոնք կանգնած էին նաւահանգստի մօտ, աղաղակը և բարբառը դրաւում էին այդ մատաղահասի ուշադրութիւնը, որնոր առաջին անգամն էր ծովափնեայ քաղաք տեսնում, նա ամենևին մոռացաւ, թէ ինչու համար է ինքն այնտեղ. ուր բոլորը նորա համար նոր էր և զարմանալի:

Յանկարծ յուսահատութեան մի ձայն հարկադրեց նրան կանգնել: Նորա առաջև կանգնած էր մէկ կին, ձեռքին երեխայ, ու վանդակներից թեքված լինելով զցում է երակային ջրի մէջ: Ավգուստինը նկատեց և տեսաւ մէկ երեխայ, որ ծփվում էր ալիքների միջում: Զմտածելով երկար, Ավգուստինը զցեց իւր վերնաշորը, թռաւ ջրի մէջ. լողաց դէպի խեղդվող երեխայն: Նա գերազանց լողաց, և բռնեց մէկ ձեռքով գունատված աղջկանը, պահելով նրան ջրից բարձր ու լողաց կրկին դէպի ցամաքը: Այնտեղ արդէն հաւաքվել էին շատ հետաքրքիրներ, որոնք նայում էին այդ պատահմունքին ինչպէս մի նշանաւոր դիտուածքի վերայ. միայն մի քանիսը սկսան բանալ իրանց նաւակները, և յառաջել դէպի երեխայի փրկողը: Աղջիկն անդադարեցել էր, երբ որ Ավգուստինը մոտրեց նրան նաւակի մէջ: Երբ նա դուրս եկաւ ծովի ափը, դէպի նա արձակեցաւ կինը արտասուքով և ուրախութեամբ: Այդ պատանին երեխայն տալով նրան զգուշութեամբ կամենում էր հեռանալ, որ փոխէ իւր թաց հագուստը. հէնց

այս միջոցում յանկարծ բազմութեան մի-
ջից դուրս եկաւ մի ձայն. և նայում էր
ջրահեղձ երախային, որի ուշքը յետ էր
դառնում:

—Ո՞վ փրկեց Լիւսիային, ո՞ւմից պարտա-
ւոր եմ շնորհակալ լինել.

Կինը ցոյց տուեց Ավդուստինի վերայ, և
նա յանկարծ երևեցաւ Նաւապետ Ստեփան-
գի առաջ, որ խօսում էր խռովութեան մէջ:

Ահա և երևում է, որ բարի գործը ա-
մէն ժամանակ վարձատրվում է: Ճանաչում
ես արդեօք Ավդուստին այդ աղջկանը, որին
դու փրկեցիր, դա Նաւի տիրոջ աղջիկն
է, որով դու կամենում ես գնալ Ամերիկա:
Այնտեղ ես համոզել եմ պ. Սարոային, որ ա-
նէ այդ բարութիւնը քեզ տանելու. դու
փրկեցիր նորա սիրելի աղջիկը մահից, գնանք
նորա մօտ, ես քեզ չեմ թողնել այժմ:
Լիւսիան իմ հոգեզաւակն է, ես սիրում եմ
նրան հօր պէս:

Ավդուստինը կամեցաւ հրաժարվել, ո-
րովհետև թրջված էր, բայց Նաւապետը չը
կամեցաւ լսել նրան, վեր առաւ Լիւսիային
և այդ պատանեակին ու բերաւ դէպի մի
մեծ տուն: Երեխայի հայրը վազեցաւ նրանց
յառաջ սաստիկ շփոթված, արդէն հասել
էր նրան համբաւը այդ պատահմունքի հա-
մար, նա էլ չ'կարողացաւ ոչինչ արտասա-
նել, միայն զրկեց երեխային և նորա փրը-
կողին:

—Լաւ է, որ աղջիկ պարոնը չ'գիտէ ոչինչ,
ասաց Նաւապետը. եթէ ոչ, նա կմեռնէր եր-
կիւղից: Այժմ ուրախութիւնը կը հարկադ-
րէ մեզ մոռանալ այդ տարաբախտութիւնը.
սակայն պէտք է առաջ հաղցնել այդ քաջ
պատանեակին ցամաք հագուստ, որ չ'լինի
թէ նա հիւանդանայ:

—Եկէ՛ք Նաւապետ իմ մօտ, ասաց պ.
Սարոան, — վեր առէ՛ք բոլորը, ինչ որ հար-
կաւոր է, ես գնամ պատրաստեմ ամուսնոյս,

ես դեռ չեմ կարող ուշքի գալ, և ամենևին չեմ մոռանալ իմ աղջկանս փրկողին:

Երբ որ մօրը պատմեցին այդ պատահմունքը, նա զուռնատվեցաւ, և բռնեց ելեխային, ու ծածկեց նրան ջերմ համբոյրներով: Արտասուքը թեթեւացրեց նրան: Երբ որ Ավդուտինը ներս մտաւ, նա յարձակեցաւ դէպի նա մեծարելու համար, բրոնեց նորա ձեռքիցը, և արտասուքով ասաց,

— Ես ինչպէս շնորհակալ լինիմ քեզ նից, դուք փրկել էք իմ աղջկան, իմ սիրելի Լիւսիային . . . ինչով կարող եմ վարձահատոյց լինել ձեզ:

— Դա մի հասարակ պատահմունք է, պատասխանեց համեստաբար պատանին, ամենքն էլ կարող են անել այդ:

— Բայց միայն այն տեղ կանգնած կային տասնի չափ բերանաբաց մարդիկ, և ոչ ոք չըշարժեցաւ տեղից, ասաց Նաւապետը ծիծաղելով. ես զուր չեմ սիրել քեզ առաջին անգամ տեսնելովս:

Երկարաբանութիւն չէ հարկաւոր, թէ ինչպէս սիրեցին, և շնորհակալ եղան այդ պատանեկիցը, և թէ ինչպէս մեծարեցին նորան: Նա հանդիպեցաւ բարի ընտանեաց, և չեմացաւ թէ ինչպէս արտայայտեր իւր շնորհակալութիւնը: Նա կատարեալ բախտաւոր եղաւ իր բարի գործով:

Գ.ԼՈՒԽ Գ.

„Կարոլենա“ նաւի հարուստ տերը-Սաքրոպը կա՛ռեցաւ առատապէս պարգևատրել Ավդուտինին իրան հաւատարմութիւն ցոյց տալու համար, բայց Ավդուտինը չընդունեց ոչինչ. միայն խնդրեց Ամերիկա գնալու համար վկայագիր և մէկ յանձնարարական նամակ մի զօրեղ Ամերիկացու վերայ, որ կարողանայ հեշտացնել իւր հոգսերը և անբաւականութիւնները, որ կարող են պատահել մի Եւրոպացու նոր — աշխարհքումը: Այդ անշահասիրութիւնը էր կարելի, որ չ'զարմացնէր համակրութիւն ազնիւ և

բարի նաւապետի մէջ, որ սիրեց Աւգուստինին ինչպէս իւր հարազատ որդուն և խոստացաւ հոգալ նորա համար, ինչպէս իւր որդու վերայ։

Սաւի տիրոջ ընտանիքը կամենում էին պահել իրանց մօտ փոքրիկ Լիւսիայի փրկողին. բայց նաւապետը յայտնեց, որ չէ կարելի կորցնել ժամանակ, եթէ հողմը յարմար լինի, որ յաջողակ սկսվի երկար ճանապարհորդութիւնը։ Հէնց դորա մասին ինքը Աւգուստինը շտապում էր. որովհետև համարում էր ամէն մի կորցրած ժամը, որ չէր նուիրած անհոգ անելու համար իւր ընտանիքը։ Սարո

և նորա կինը արտասուքով ճանապարհ դցեցին Աւգուստինին, ցանկալով նրան յաջողութիւն. նաւապետ Ստեփանը բերաւ նորան շուտով նաւի մէջ, և շուտով դկարոլինան՝ բարձրացրեց խարիսխը և խաղաց ծովի մէջ։ Ցերունի ծովաշոջիկը վեր առաւ Աւգուստինին իւր սենեակի մէջ, և

հոգաց նորա ամէն հարկաւորութիւնը, որ հարկաւոր էին երկար ճանապարհորդութեան համար։ Մատաղ Ռշարեկերը կարգաւորեց, որ զուր տեղ ժամանակ չկորցնէ։ Իմանալով որ նաւումը կայ մի Ամերիկացի, որ գիտէ Հնդիկների լեզուն ինչպէս իւր մայրենին, խնդրեց նաւապետից թոյլտուութիւն, որ դաս առնէ այդ մատաղ նաւասարդից։

— Այդ դժուար չէ, ինչպես կամենում սովորել, խօսել փայրենաբարբ մարդկան հետ, որոնց հետ բնակվել ես կամենում, պատասխանեց նաւապետը.— Նադդին կարդին մարդ է. քեզ ոչինչ վատ բան չի սովորեցնիլ. բարեկամացիր նորա հետ։ Ինձ հաճելի է, երբ պարապում էք զորձով։ Ձեզ համար և ճանապարհը երկար չի երևիլ և ձանձրալի։

Աւգուստինը շուտով ծանօթացաւ Նաթանիել կուբերի հետ, որին նաւումը կո-

ջումէին հասարակ կերպով Նադդի։ Նա յանձն առաւ յօժարութեամբ դաս տալու Հնդկաց լեզուն, և զարմացաւ իւր մտաղ ընկերոջ հասկացողութեան և ժրաջանութեան վերայ։ Ժամանակը անցնումէր նոցա համար անկատելի կերպով, և այդ խղճուկ զինուորը կարվեցաւ հոգւով Եւրոպացու հետ, որից կարողացաւ և իմանալ հինգ շատ օգտաւէտ բաներ։ Ամերիկացին անկիրթ մարդ էր. բայց մաքուր, գործակատար և քաջ, նաև ապեան չ'սխալվեցաւ ընտրել այսպիսի ընկեր Ավգուստինի համար։

Ճանապարհորդութիւնը դէպի Ամերիկա այնքան յաջողակ չեղաւ։ Հակառակ քամիները շատ անգամ արգելումէին ճանապարհորդութիւնը, բայց երկիւղալի փոթորիկ չեղաւ, և „կարողենան“ սեսսաւ վերջապէս ամպի միջում Նոր աշխարհքի ծովափը։ Նաւատեաց բաղմութիւնը ուրախացաւ, որ այդ դժուարին ճանապարհորդութիւնը

ժամանումէ դէպի վերջը։ Ավգուստինը այդ ժամանակ խօսումէր բաւական վարժ Հընդկի լեզուն, և կարողանումէր խօսակցական ընակչաց հետ։ Նրան շփոթեցին այն յոյսերը, որ պէտք է ստանայ հօրեղբօր ժառանգութիւնը, կ'լինի հարուստ, կ'հաստատվի ընակելու իւր նոր հայրենիքումը։ Ի հարկէ նա հաւատումէր իւր նոր ընկերոջը իւր բոլոր գաղտնիքը, բայց Նադդին չէր ուրախանում դրանով, ընդհակառակն նա տխուր էր և բաղմահոգ. Ավգուստինն էլ չէր կարող չ'նկատել այս։

— Ի՞նչ է պատահել քեզ, հարցրեց նա, սեղմելով Ամերիկացու ձեռքը։ — Դու չես ուրախանում ամենևին, որ ծովի ամբը երևումէ և դու շուտով կ'լինես հայրենիքումդ։

— Ես ուրախ եմ, որ կ'հանգստանանք ցամաքումը, պատասխանեց Նադդին հոգոց հանելով. բայց...

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչ

կայ սրտումդ, դու չես կամենում այն բաժանել ինձ հետ:

Նադդին սրբեց աչքերը, որոց մէջ փայլումէին արտասուք:

—Ինձ համար ծանր է. որ ես քեզ սիրեցի, ինչպէս ընկեր, եղբայր, ահա մենք պէտք է բաժանվինք:

—Ի՞նչ ես ասում Նադդի, աղաղակեց վառված Ավգուստինը.—ես քեզ շատ պարտաւոր եմ, մենք կ'մնանք միասին:

—Մի՞թէ կարելի է այդ, հարցրեց Ամերիկացին տխրութեամբ: Եթէ լինէի ես հարուստ և անկախ մարդ, չէի բաժանվիլ քեզնից. որովհետև ազգական չունիմ, ես որբ եմ, և ինձ համար ծանր կ'լինի առանց քեզ. ես ողորմելի ծովային զինուոր եմ, բայց դու կ'լինես շուտով հարուստ, և կմոռանաս ինձ:

—Ի՞նչ ես դու խօսում հարստութեան և աղքատութեան վերայ: Ես կապված եմ քեզ հետ այնպէս, ինչպէս դու ինձ հետ,

պէտք է քեզ հետ միասին կրեմ թէ ուրախութիւն և թէ դառնութիւն, պէտք է ապրինք միասին ինչպէս հարազատ եղբարք:

Մենք ինչպէ՞ ի եղբարք ենք, դու կրթված մարդ ես. իսկ ես հասարակ վայրենաբարոյ: Նաւի միջումը մենք կարողանում ենք լինել բայց ցամաքումը ես քեզ ընկեր չեմ:

Ավգուստինը կարմրեցաւ խռովութենից, նորա աչքերը փայլեցին ժժգոհութենով, և աղաղակեց. Նադդի, դու անարգում ես ինձ. մի՞թէ դու կարծում ես, թէ ես ընդունակ եմ, և կ'հեռանամ ընկերից սաստկով թէ նա աղքատ է և քիչ սովորել ինձնից: Դեռ ով գիտէ, կ'ստանամ արդեօք հօրեղբօրս ժառանգութիւնը, թէ ոչ: Ամէն դիպուածքում ես ցանկանում եմ միասին կենալ, քեզ հետ բաժանել ամէնը, ինչ որ ունինք: Այս երկրումը քո ընկերութիւնը և քո խորհուրդը թանկագին է հարստութենից: Կարծեմ դեռ ես քեզ պարտա-

ւոր եմ, միայն թէ դու համաձայնիս չ'թողնելու ինձ :

Ամերիկացին շատ շարժեցաւ, նա վստահացաւ Ավդուստինի ընկերութեան վերայ, թէև իմանում էր, որ ինքը կարող է ցոյց տալ նրան հարկաւոր ծառայութիւններ : Նա զարդացած էր Ամերիկայի անտառներում, կարող էր կառուցանել բնակարան գերաններից, սերմել դաշտը, և ծեր որսկան էր : Հնդիկների հետ ծանօթ, իմանում էր նոցա բնութիւնները և սովորութիւնները, և ճշմարիտ, որ կարող էր օգուտ տալ Եւրոպացուն, որ առաջին անգամն էր գալիս Ամերիկա :

— Դու ճշմարիտ ես Ավդուստին, ասաց նա մի փոքր մտածմունքից յետոյ—ես կարող եմ քեզ հարկաւոր լինել : Եթէ չ'ուզենամ ես փող, ունիմ մի զոյգ երկար ատուր բազուկներ և հմտութիւն : Հնդիկների համար շատ վատ են ասում, նոցա հետ վարվել

դժուար է : Իմ հայրս կենում էր նոցա հետ բարեկամութեամբ ամէն ժամանակ, և ես չեմ վիճել և հակառակվել նոցա հետ : Նորա մահից յետոյ ես մտածեցի գնալ ծովային զենուոր դառնալ, բայց այժմ ծովը ինձ ատելի է : Քեզ հարկաւոր է օգնական քո գործքերի մէջ, ես էլ պատրաստ եմ ծառայելու քեզ :

Ավդուստինը մտեցաւ գրկելու իւր ընկերոջ, չ'ծածկելով ուրախութեան արտասուքը : Միայն Նադդիի դէմքը կրկին խոժոռեցաւ ջերմ գրկախառնութենից, և համարեա թէ մերժեց ընկերոջ :

—Քեզ ի՞նչ պատահեցաւ, Նադդի, հարցրեց զարմացած Ավդուստինը, էլ ի՞նչպիսի դառնութիւն տիրացրեց քեզ :

—Այն, որ մենք կազատվում էինք մեր ազատնին առանց լաւ մտածելու : Ես չեմ կարող հեռանալ քեզ, որովհետև ես պարտ-

տաւորված եմ յետ դառնալու մի և նոյն նաւով դէպի Եւրոպա: Ես այնպէս վարձած եմ:

— Մի՞թէ:

— Դէպքերը, թէ կան մարդիկ, որոնք դրբանով չեն խղճահարվիլ և կ'մնան այնտեղ, որ տեղ լաւ է, բայց ես չեմ կարող կորել իմ խօսքս:

— Մի՞թէ նաւապետ Սամսոնը չէ կարող աղատել քեզ:

Կարող է, միայն նա պարտաւոր է իմանալ Սորոսի համաձայնութիւնը: Սակայն ես այդ լաւ չ'գիտեմ, միայն իմանում եմ որ ես կատարեալ բախտաւոր կլինէի, եթէ կարողանայի չ'բաժանվիլ քեզնից:

— Կարող էք չ'բաժանվիլ իմ որդիք, յայտնեց նաւապետի բարձր ձայնը, որնոր անկասելի կերպով մօտացել էր այդ մատաղահասներին, և լսել նոցա խօսակցութիւնը:— Հապա ինչու դուք բացել էք ձեր

աչքերը իմ վերայ. շարունակեց նա ծիծաղելով.— Ես նաւի միջում կատարեալ իրաւունք ունիմ, կարող եմ արձակել մինչև անգամ ծովային ամէն զինուորներուն, ոչ թէ միայն մէկին: Ես յօժարութենով արձակում եմ Նադդիին Ավգուստինի հետ. որոհետև Դուք երկուսներդ էլ լաւ տղերք էք: Սորոսը յօժար կ'լինի, որ ես կատարել եմ Լիւսիայի վրիժողի ցանկութիւնը: Դուք երկուսներդ կ'լինէք ուրախ միասին. և այդ ընկերութիւնը կ'պահպանէ ձեզ ծանր վայրկեաններումը: Որովհետև ես միշտ բաւական եմ եղել Նադդիի ծառայութեամբը. ապա տալիս եմ նրան Սորոսի կողմից ընծայ հարիւր տալեր. որ գնէ իրա համար մի կտոր հող Ավգուստինի կայքից մօտ: Իրրև բախտաւոր ընկերներ ապրեցէք, և երբ որ նաւապետ Սամսոնը բոլորովին կը ծերանայ, և անպէտք կ'լինի գործքի համար, տուէք և նրան մէկ տան անկիւն ձեզ-

նից մօտ, ուր կարողանայ անցուցանել մնացեալ օրերը և հոգին տալ իր ոսկորները։

Ուրախութիւնը և շնորհակալութիւնը այնպէս շփոթեցին այդ մտաղաղամերին, որ չ'գտան մէկ խօսք, թէ ինչպէս արտայայտեն իրանց զգացմունքը։ Նոքա նաւապետի ձեռքը բռնած համբուրում էին որդիական քնքուշութենով։

Ապա բաւական է, ասաց շարժված ծերը։ — Եղէք մաքուր, բարի և ճշմարտասէր, սիրեցէք մինչև անգամ ձեր թշնամիներուն, և ձեր ամէն ձեռնարկութիւնը կը յաջողվի։ Ահա մենք արդէն ծովի ափումն ենք, և ինձ պարտ է հրաման տալ նաւահանգստեան տեղը մտնելու։

Նաւապետը գնաց, ուր իրա պարտաւորութիւնն էր, թողնելով նրանց կատարեալ ուախտաւոր։ Այդ մտաղ մարդիկը վստահաբար սպասեցին ապագային, նոցա աչքերը փայլեցին ուրախութեան արտասուքով,

նոքա զրկախառնվեցան ինչպէս եղբարք, խոստանալով սուրբ պահել բարի նաւապետի խորհուրդը։ Արդէն նոցա շուտ երևեցաւ ափը, որ այնպէս ամպամած էր, որ հազիւ թէ որոշվում էին տները, ծառերը և աշտարակները։ Ավդուստինը հետաքրքրութենով նայում էր իւր նոր հայրենեաց վերայ. և նորա սիրտը սաստիկ հարկանվում էր ակնկալութենից։ Վերջապէս „Կարոլինան" մտաւ նաւահանգիստը։ Նաւապետն էլ հրամայեց արձակել նաւակը, և ասաց այդ սիրելի ընկերաց։

— Պատրաստ եղէ՛ք, որ դաք եռևիցս, եռինքս պէտք է տանեմ Ավդուստինին մարդու մօտ, որին յանձնել է Սարոտը։ Ցուսով եմ, որ նա շատ կ'օգնէ քեզ այդ գործումը, շուտով Ավդուստինն էլ կ'ապահովի իւր մօրը։ Շուտ արէ՛ք, որ չ'լինի թէ հոգմը փոխարկվի։

Այդ երկու ընկերները ունէին փոքր կայք, այդ էլ շուտով պատրաստեցին։ Ճանապար-

հորդութիւնը երկար չէր, բայց այդ մատաղ մարդիկը կարծում էին երկար այդ ժամանակը: Նաւապետը գնաց շուտով Սարոսի բարեկամի մօտ, որնոր Նիւ — Եօրքացի հարուստ վաճառական էր, և որ ցոյց տուեց ջերմ համակրութիւն այդ մատաղ մարդու գործի համար:

ԳԼՈՒԽ Գ.

Ավգուստինի Ամերիկա հասնիլը

Ամառվայ զեղեցիկ առաւօտ էր, Ամերիկայի երևելի և կենդանագրական անտառի հով շուաքի տակ գնացել էին երեք մատաղ մարդիկ: Նորա շուրջը էր հանդարտ, կանաչը փայլում էր արեգական ճառագայթներից, որ թափանցում էին նորա թաւ տերևների միջով. ծառերը կանգնած էին կարգաւորեալ դասաւորութեամբ. ծաղկանց հոտը բուրում էր օդի մէջ, և երբեմն թռչունները թռչում էին մէկ ծառից դէպի

միւսը խանդարելով անտառի խաղաղ դրութիւնը իւրեանց ճռուլզելով: Այս ճանապարհորդները զուարճանում էին բնութեան զարմանալի ձևով, և երբեմն ականջ էին դնում, և նայում անտառի թանձրութեանը, արդարև կասկածելով և վտանգներից:

Նոքա երեքեան զինուորված էին, և ունէին հրացաններ ու որսական մեծ դանակ: Նրանցից մէկը ունէր դամահավզ. այդ զէնքը և դեմքի թուխ գոյնը որոշում էին Հնդկացուն: Երևում էր, որ նա այդ երկու Եւրոպացւոց առաջնորդն էր, որոնց հետ երբեմն էլ սկսում էր խօսել:

Եւրոպացիները Ավգուստին և Նադին էին: Նաւապետ Սաեմինգը և Նիւ—Եօրքացի վաճառականը խոկոյն գործ դրին վիճայագիրները, որ բերել էր Ավգուստինը, և թէպետ հեշտ չէր հասնիլ հօրեղբօր կայքը ժառանգութեանը, սակայն պաշտպանութեամբ և փողով գործը սկսաւ դէպի ա-

ոաջ գնալ. Ավգուստինը ընդունվեցաւ օ-
բինաւոր ժառանգ, նրան տուին հօրեղբօր
փողերը, և ընդունեցին նրան ընդարձակ երկ-
րի տարածութեան տիրապետող: Դրանից
աւելի չէր կարելի գործ տեսնել, որ նա հո-
գաց, ինչ և իցէ շատ դժուարութենով տի-
րապետելու համար այն երկրին, որտեղ կեն-
ցաղավարում էին Ընդկացի ազգերը: Նա գը-
նաց այն տեղ իւր ընկերոջ և ուղեցուցի
հետ. ուղեցույցը տեղական հասկացող
մարդ էր, որնոր լաւ էր ճանաչում այն տե-
ղը: Նիւ—Եօրքացի վաճառականը ամենա-
հարկաւոր նիւթերով խնամք տարաւ այդ
մատաղների վերայ. խորհուրդ տուեց նրանց.
թէ ինչպէս պէտք է խօսել և վարվել Ընդ-
կացի ուղեցուցի և ուրիշ գենուորների հետ.
որովհետև առանց նոցա համաձայնութեան
չէ կարելի և բնակվել այն երկրումը, որը
համարում են նոքա իրանց սեպհականութիւն:
Պէտք էր գործ դնել վայրենարարոների հա-

մար ընծաներ և քաղցրութենով հարկա-
դրել նրանց առանց մի սպառնալիք գործ դը-
նելու ոչ մի բանի համար. որովհետև ա-
ռանց այդ կարմրակաշիների թոյլատրութեան
ոչ մի Եւրոպացի դեռ չէր կարող բնակվել
նոցա կողմերումը:

Արեգակն բարձր կանգնած էր կապոյտ
և պարզ երկնքումը: Ճանապարհորդները
մօտեցան մէկ բլակի, որի վերայ կար մէկ
հաստ կաղնի ծառ, ուղեցույցը մօտենալով
նրան, ընկղմանեց նորա փափուկ մամուռի
վերայ հանգստանալու նպատակով:

Ինչո՞ւ ես պահում մեզ, հարցրեց Ավ-
գուստինը,—դեռ օրը աւելի չէ անցել, մենք
չենք նեղացած, և կարող ենք գնալ էլի. ե-
ռեւի դու նեղացել ես, Դակոտան:

Կարմրակաշին ծիծաղեցաւ արհամար-
հանօք:

—Դակոտաները կարող է գնալ երկար, և
ամենևին չի՛ նեղանալ, ամենևին չի սոփա-
ծանալ, ես դադարում եմ էնդուր, որ տեղ

ենք հասել։

—Ինչպէս ենք հասել, ապա որտեղ է լեռը, որի համար դու ասացիր, մեր շուրջը անտառ է։

Հնդկացին լուռ ցոյց տուեց ձեռքով դէպի արևելք, ընկերները նայեցին դէպի այն կողմը, և Նադին սկսաւ խօսել.

—Ոչինչ չէ երևում, բայց լեռը պէտք է որ մօտ լինի. կարմրակաշին ամենևին չի՛ սխալվել։

Նոքա անցան դէպի առաջ մի քանի քայլ, և շարժեցին ցանկը, որ բուսած թփերից էր, և նրանց աչքին երևեցաւ պարզ փայլուն լեռը, որի մէջ խաղում էին արևական ճառագայթներ։

Այդ դրութիւնը այնքան հիանալի էր, մինչև անգամ Ավգուստինը և Նադին չը-կարողացան զսպել հիացման աղաղակը։ Լեռը ընկած էր նոցա առաջին ինչպէս ոզորկ հայելի, կանանչ ափերով։ Այդ անտառի

հարիւր տարեկան ծառերը արդարև դիտում էին նորան. հեռի երևում էին սարերի շուշաններ։ Եւ այդ փառաւոր տեղի վերայ փայլում էր պարզ կապոյտ երկինքը, և պայծառ արեգակը։

—Ինչպիսի գեղեցկութիւն, ինչպիսի զարմանք, աղաղակեց Ավգուստինը խորին զգացմունքով. —Ի՞նչ կարող է այս տեղից աւելի գեղեցիկ լինել։ Այս տեղ կցանկանայի անցուցանել իմ բոլոր կեանքս, այս տեղ կը լինեի ես բախտաւոր ամէն թագաւորներից։ Ջե՞մ սխալվում արդեօք, Դակոտախ։ Մի՞թէ այդ տեղը պէտք է պատկանի ինձ. դա իմ ժառանգութիւնս է։

—Կարմրակաշին չի՛ սխալվել, պատասխանեց Նադին. — Այո՛, այդ այն լեռն է. որի ափումը քո կալուածքն է, այդպէս է յայտնուած մեզ մեր պլանի մէջ։ Ահա սարերը, անտառը. էլ կարծիք չկայ։ Ես ուրախ եմ որ քո կալուածքը այդպէս կենդանագրական

է. Ճշմարիտ որ այստեղ ցանկալի է կենալ:

—Դա կատարեալ դրախտ է, ահա մայրս կ'լինի բաւական, նոյնպէս էլ բախտաւոր քոյրերս, երբ որ նոքա կ'գնակին այստեղ: Ես մտածումեմ, Նադդի, կառուցանել այստեղ տուն:

—Ինձ էլ այդպէս է երևում, որովհետև յարմար տեղ է, պակասութիւն էլ չենք կրիլ նիւթերի կողմանէ շինութեան մասին: Այդ ըզի մէջ էլ պէտք է որ շատ ճուկն էլ լինի, անտառումն էլ նոյնպէս որսի կենդանիք. երկիրն էլ կ'լինի պտղաւէտ: Միայն չ'պէտք է ծուլանալ. և մենք կապրինք ճոխութեամբ: Տես ահա փոքրիկ գետը հոսումէ մեծով և թափվումէ ըզի մէջ: Այս տեղ միացած է ամէնը, ինչ որ հարկաւոր է այնպիսի մշակների համար, ինչպիսի մենք ենք: Միայն ամէնից յառաջ մենք պարտաւոր ենք աներկիւղ լինելու, բարեկամանալ Հնդկացւոց հետ և ստանալ նոցա հա-

մաձայնութիւնը երկրին տիրապետելու մասին: Առանց դրա մենք պէտք է ձեռք քաշենք ամէնից, և չ'խորհինք մօրդ գալու համար այս տեղ:

—Կարելի է արդեօք, որ վայրենաբարոյները սպառնան մեզ: Ամերիկան զօրութիւնը գտնվումէ այս տեղի երեք մասումը և մենք ամէն ժամանակ կարող ենք դտնել պաշտպանութիւն:

— Դու ասումես այդպէս էնդուր, որ լաւ չես ճանաչում կարմրակաշիներին, ասաց Նադդին. — Նոցա ատելութիւնը ահարկու է: Առաջինն կ'զարթնանայ քեզ նում երկրայութիւն, դու կ'ստանաս անեռևութարար թշնամիներ, և չես կարող խնդրել ոչ մէկ օգնութիւն: Կարելի է քեզ համար կ'լինին վրեժխնդիր. բայց ի՞նչ է պէտք դրան: Ո՛չ, դու առաջ պէտք է ծխես հաշտութեան ծխամորճը Հնդկացւոց վրանումը այն ազգի գլխաւորի հետ. և ապա կա-

բաղ ես կառուցանել տուն: Գնանք մեր ու-
զեցոյցի մօտ. նա կ'տանի մեզ իրա հայրե-
նակիցների մօտ:

—Ես դու հաւատում ես, որ նոքա կը-
ընդունին մեզ բարեկամաբար:

—Ինչու համար չէ. կարմրակաշիները
բարի և քաղցր ժողովուրդ են: Նոքա կը-
սիրեն ընծաներ, դու վեր առ նրանցից բա-
ւական: Այս տեղ երկիրը բաւական է ա-
մենի համար, և այդ պատճառի նոքա ա-
կամայ կ'յարգեն սպիտակներին, համարելով
իրանց նրանցից բարձր: Միամիտ կաց իմ
ընկեր, մենք կ'համաձայնվինք մեր վայրե-
նաբարոյ դրացիների հետ:

Նոքա գնացին մօտեցան Հնդկացուն, որ
ընկողմնած էր կաղնի ծառի տակ, նստե-
ցան նրանից մօտ, և սկսան յայտնել նրան
իրան ընկուվ, թէ ցանկանում են տեսու-
թիւն գնալ կարմրակաշի ազգի գլխաւորի
մօտ, որտեղ մօտ է: Դակոտախը լսեց ուշադ-

բութեամբ և պատասխանեց.

Ամենից մօտ բնակվում են Գելավարները,
Դակոտան էլ կասէ գլխաւորին, թէ սպի-
տակազէմ մարդիկը կամենում են բարեկա-
մանալ իրա հետ, և նոքա եկել են առատ
ձեռքերով:

—Մենք դա՞նք քեզ հետ. հարցրեց Ավ-
դուստինը:

—Ո՛չ, Դակոտախը կերթայ մենակ, նա
յետ կ'դառնայ պատասխանով մինչև արե-
գակի մայր մտնելը: Սպասեցէ՛ք այս տեղ:

—Այդ վայրենաբարոյ անձն ճանապարհ
ընկաւ արդընթաց քայլերով անտառի միջ,
և շուտով ծածկվեցաւ նոցա աչքերից: Այդ
երկու բարեկամները սկսան հանդստանալ
հենց այն կաղնիի տակ. փոխանակ ննջելու
նոքա սկսան խօսիլ իրանց սկսելի գործի և
Դակոտախի ուղարկելու մասին: Այդ դես-
պանութիւնը նոցա բաւական խառն էր ե-
բևում. և ծիծաղում էին վայրենաբարոնե-

ըի երևելի կերպարանքների վերայ, ահա այդ միջոցում յանկարծ լսուեցաւ շաչիւն թափի մէջ. Նադդին լռեց, սեղմեց ընկերի ձեռքը, և ցոյց տուեց նրան մատով դէպի գեղեցիկագոյն եղջերուն, որ կամենում էր անցանել թափի միջից. և միշտ աշխատելով թաղնվիլ էր կամենում երկիւղից, միայն իւր բազմաձիւղ եղջիւրները մատնեցին նրան:

—Ահա գեղեցիկ խորոված, հծծեց Նադդին.—միայն նա դեռ հեռի է: Ավգուստին, վեր ա՛ռ հրացանդ և աշխատիր ուղղելու գնդակդ ուղղակի: Մեզ յարմար է ապրիլ որսով:

Ավգուստինը հանդարտ բռնեց հրացանը, սպասելով, որ եղջերուն մօտենայ, և երբ որ թափի եռևից դէպի յառաջ խաղաց, և կամենում էր փախչել, խփոյն հրացանը արձակեց, և այդ գեղեցիկ անասունը գլորվեցաւ: Մօտեցան շուտով նրան ուրախացած, որ յաջողվեցաւ իրանց որսը, այդ միջոցում

յանկարծ դուրս եկաւ մէկ գեղեցկակազմ Հնդկացի բռնած ձեռին ագեղն և նետերը, դամահավգն էլ գօտիի մէջ, և այս էր նորա միայնակ յոյսը: Այդ կարմրակաշի գէմքը յայտնում էր բարկութիւն, աչքերը փայլում էին չարութենից, նորա կրծիցն խուլ կամ խառն ձայն էր դուրս գալիս „հուք“, որ նշանակվում է այդ վայրենաբնների մէջ սաստիկ բարկութիւն: Տեսնելով երկու սպիտակ մարդկանց, նա բռնեց իւր դամահավգը, և բարձրացրեց խփելու նրանով: Ավգուստինը և Նադդին զարմացած նայում էին այդ մատաղ գեղեցիկ վայրենաբարոյի վերայ. Նադդին ասաց իւր ընկերոջ.

—Դա գեղավար է, չէ հարկաւոր դորա հետ կռուիլ: Ավգուստինը խփոյն կորեց մէկ կանաչ ճիւղ, և կամենում էր տալ նրան, որ կանգնած էր սպառնողական զրդռի մէջ: Ի վերայ

այսը ամենայնի Նադդին պատրաստ պահեց հրացանը այն նպատակով, որ արձակէ Դելավարի վերայ, եթէ կըշարժի վնասելու իւր ընկերոջ. բայց կարմրակաշին կանգնեցաւ անշարժ արձանի պէս. և միայն փայլուն աչքերը յայտնուում էին, որ նա սուր մարդ է: Ավգուստինը ձգելով դէպի նա ձիւղը ասաց.

— Մենք բարեկամ ենք կարմրակաշիներին, և ցանկանում ենք կենալ նոցա հետ խաղաղութեամբ. դու էլ եղիր մեր ընկերը, մեկնիր լնձ ձեռքդ, ինչպէս եղբօր, պէտք է ծխենք միասին հաշտութեան ծխաքարշը:

— Ինչու համար են եկել այս տեղ սպիտակ դէմքով մարդիկը, աւելացրեց վայրենաբարն, որ գողանան Վենոնդի եղջերուն, որի եռևից նա շատուց էր ընկել որսալու: Ինչու համար է՛ք դուք եկել մեր երկիրը, մենք չենք կարող լինել բարեկամ. Վենոնդան չի թաղելու դամահաղը:

— Այդ կատմ ես իմ եղբօրս մեռցրած

եղջերուն, ասաց հեգութենով Ավգուստինը. — Վեր առ քեզ լինի:

— Վենոնդան չի ընդունել ընծայ, ասաց վստահաբար Դելավարը, նա մեծ որսորդ է, և կ'գանե ուրիշ եղջերու, դէպի սպիտակադէմքերը նա չի ձգել իւր ձեռը, բայց պէտք է վրէժխնդիր լինի:

Ավգուստինը մինչ կամենում էր խօսիլ, նա թոյլ չէր տալիս նրան ասելու մէկ խօսք. բայց աւելցրեց.

Վենոնդան չի կամենալ երկար լսել սպիտակադէմքին, նորա ականջները փակված են: Եւ արձակելով դէպի այդ ընկերները սպառնողական հայեցուածք. բռնեց դամահաղը և կամենում էր դցել դէպի նրանց այդ զէնքը. Նադդին էլ բարձրացրեց հրացանը, արդէն պատրաստ էր արձակելու Դելավարի վերայ. և կամենում էր հարկադրված վրէժխնդիր լինել: Դա ամենևին հաճելի չէ Նադդի, ասաց Ավգուստինը, բարեաք

չեմ համարում այդպիսի կերպով վերջացնել կռիւը, իմանալով, որ Հնդկացին ամենևին չի նեղիլ իւր թշնամուն:

Լսիր Ավդուստին, ասաց նա իւր ընկերոջ — բարեւոք եմ համարում խիել այդ վայրենաբարոյ անձին. թող տուր ինձ վերջացնել նորա հետ բանը:

—Ո՛չ, Ի՛սկ Աստուծոյ մի՛ սպանիր. աղաղակեց Ավդուստինը, և բռնեց ընկերոջ հրացանը,

Դելավարը անքթիթ աչքով նայում էր այդ ընկերների վերայ. իբր աշխատում էր հասկանալ նոցա խօսքերը, և տեսաւ Նադդիի շարժումն, որ թռաւ դէպի միւս կողմը թփի մօտ, սպառնալով իւր հրացանովը: Նադդին կամենում էր յարձակվել դէպի նա, բայց Ավդուստինը կանգնացրեց նրան ասելով.

—Ո՛չ, իմ ընկեր, թող այդ վայրենին հեռանայ: Նա կարելի է զղջայ և հասկանայ, որ մենք սպանել ենք եղջերուին չմտանալով, որ ինքն էլ նորա եռեւից ընկած է եղել օրալու:

—Մի կարծիլ, թէ վայրենաբարոն կը խոստովանի իւր յիմարութիւնը: Այդ քաջը արդէն մեր չարադոյն թշնամին է, դա յարմար ժամանակ է որոնելու, որ ուզարկի մեզ այն աշխարհքը: Ամենևին չի նեղիլ նա, որ մենք սպանել ենք եղջերուին, դա կը համարվի մեծ որսորդի համար տհաճութիւն: Արդարև ես հանդարտ կ'լինէի, եթէ ուղղած լինէի դէպի նա գնդակս:

—Ի՞նչ ես ասում դու Նադդի, եթէ ես սպանութենով եկած լինէի այս երկիրը գընելու, ես կ'զրկվէի նորանից, ես բոլոր կեանքս կ'անցուցանէի խեղճութեան մէջ:

—Դու ճշմարիտ ես ասում Ավդուստին, միայն այս տեղ մարդկային կեանքը այնպիսի մեծ նշանակութիւն չունի, ինչպէս Եւրոպայում, և այդ դու ինքդ շուտով կ'փորձես: Դու պէտք է կեանք վարես այդ վայ-

բենաբարոների հետ, այնպէս էլ նոցա սովորութիւնովը պիտի կրթվես։

—Ո՛չ մի ժամանակ, ասաց Ավգուստինը հաստատապէս. թող դէպի ինձ լինեն անիրաւ, բայց ես ինքս ամենևին չեմ վարվել ընդդէմ խղճմտանացս։ Ուստի Դելավարը իր կողմից ճշմարիտ է։ Ես կամենումեմ յաղթել նորան քաղցրութեամբ, և ձեռք բերել նորա բարեկամութիւնը։

—Հազիւ թէ կարողանաս, նկատեց Նադդին...—Ամէնը ճշմարիտ է, այդ անպիտանը կը թաղնուի ուր և իցէ մեծ ծառի ետև, և նեռահար կանէ մեզ։ Այդ և խօսակցութիւնները քիչ կ'օգնեն այդպիսի դիպուածքում։ Լաւ կ'լինի, զուարճանանք մեր եղջերուովը, և պատրաստենք մեզ համար խորոված։ Ես քաղցած եմ։

Ատաղ մարդիկը թեքվեցան եղջերուի մօտ, և Նադդին յանկարծ աղաղակեց. լաւ դցեցիր, դու կ'լինես լաւ նետաձիգ։ Օգնրի ինձ հանելու այս եղջերաւոր բարեկամի փորոտիքը, որ հայրից մեզ այսքան նեղութիւն, յետոյ ես կ'պատրաստեմ կրակ, և կ'խորովեմ ճաշակելի պատառները։ Դակոտան էլ նոյնպէս կ'լինի բաւական, երբ մենք կհասուցանենք նրան խորոված։

Այդ պատրաստութեան միջոցում նոքա մոռացել էին Դելավարին. և ուրախութեամբ խօսակցում էին, սակայն վայրենաբարոն ընդունում էր այս խօսքերը իրա համար։ Երբ որ Նադդին կտրեց պատառը և կամենում էր բարձրացնել գլուխը, թնդաց մէկ ձայն, և նետը թռաւ մի փոքր բարձր նորա գլխից և ցցուեց ծառի միջումը։

—Լաւ եղաւ, որ ես շուտ չբարձրացրի գլուխս, աղաղակեց Նադդին.—այդ անիծեալ վայրենին կամենում էր նետով խփել գլխիս։ Արդէն նա էլ չի աղատվել ինձանից։

Եւ բռնելով հրացանը, նա յարձակեցաւ դէպի թուփը, արձակեց հրացան և

յետ դառաւ անբաւական։

—Այդ Դելավարին այնպիսի ոտեր ունի, որ մինչև անգամ չի հասնում նորան գնդակը։ Գու տեսնում ես Ավգուստին, որ քո վեհանձնութիւնդ անտեղի է։ Նա չի հանգստանալ, մինչև չմեռցնէ մեզ, դա այդպիսի մի ազգ է։

—Բայց մենք այդ ազգից չենք, ուստի պատրաստենք ներել մեր թշնամիներին։ Եթէ մենք նորա ատելութեանը կ'պատասխանենք սիրով, նա կ'զղջայ իւր չարութեան վերայ։

—Սպասիր, ոչ, մինչև այն ժամանակ, սպասիր ամէն մի վայրկեան մահին։ Շատ ուրախ կ'լինէի, եթէ նրան սպանած լինէի, երբ որ աչքիս առաջևն էր։

—Ո՛չ, Նադդի, ես չեմ կամենում սպանութիւն, մոռացիր „մենք պարտաւոր ենք սիրել թշնամիներուս, պարտաւոր ենք անել նրանց բարութիւն“ խօսքերի վերայ։ Վայրենա-

բարոն այդ չի կարող հասկանալ, նաև նորա վարքը անպիտան են, որովհետև նորա միտքը, դատողութիւնը լուսաւոր չեն։ Հարկաւոր է ապացուցանել նրան հեղութեամբ, թէ մենք նորա ընկեր ենք և բարեկամ, և կամենում ենք նորա լաւութիւնը, որով նա կուղղուի։

Ամերիկացին տեսնելով, որ չի կարողանում յաղթել ընկերոջ, սեղմեց նորա ուսը։ Նա լաւ էր ճանաչում վայրենաբարոներին, և յոյս էլ չունէր, թէ նորա կ'շտութեան Ավգուստինի կարծիքը ներելու թշնամուացը։ Յատկապէս այդ վենոնդան ամենևին չունէր մարդկային զգացմունք, և աւելի նման էր մարդու, որոնոր պատրաստ է հեռամաւ լինելու իւր թշնամուն մահից յետ էլ։

Կրկին սկսան կերակրի պատրաստութիւն տեսնել։ Կրակը վառվում էր պայծառ, եղջերուն էլ խորովվում շամփուրի վերայ։

երկար ճանապարհորդութիւնը և խռովութիւնը չչփոթեցին նրանց: Փոքրիկ փայլուն գետը զովացնում էր նրանց իւր սառն ջրովը. որով և կարողանում էին համբերութեամբ սպասելու Դակոտախի դարձին, որին ուղարկել էին Դելավարների մօտ:

Արեգակը արդէն իջանում էր ծառերի գլուխներից, և ոսկեգօծում էր իւր վերջին ճառագայթներովը լեռը և սարերը. երբ որ երևեցաւ Դակոտախը այդ երկու ընկերների առաջ, ասաց.

—Դելավարների գլխաւորը պատրաստ է ընդունելու բարեկամաբար սպիտակադէմքերուն, և պէտք է ծխէ հաշտութեան ծխախոտը, երբ որ նոքա կ'նստին խորհրդի խաղոյկի շուրջը: Ընկերասը, Դելավարների գլխաւորը, սպասում է օտարականներիդ:

—Դու, Դակոտախ, տանում ես մեզ քո եղբարդդ մօտ, հարցրեց Ավդուսանը:

—Էս սհաթիս պատասխանեց վայրենաբարոն:

—Մենք պատրաստ ենք, ասաց Նադդին.— Միայն կարելի է դու նեղացած լինես, քեզ էլ հարկաւոր է հանդստանալ: Մենք որսել ենք եղջերու, և խորովել ենք մէկ մասն. ահա քո բաժինը. մենք քեզ համար ենք թողել դրան:

Այդ կարմրակաշի թուխ դէմքը փայլեց ժպիտով: Նա վեր առաւ առաջարկած պատառը, և ասաց.—սպիտակ եղբայրները բարի են, նոքա չեն մոռանում թուխ բարեկամներին: Դակոտախը շնորհակալ է:

Նա վայելեց շուտով, վեր առաւ ձեռքով ջուր և խմեց մի քանի ումպ և հրաւիրեց նրանց գնալու իրանց հաւելից:

—Արեգակի մայր մտնելու ժամանակ է, մենք պէտք է շուտ գնանք, Դելավարների գլխաւորը սպասում է խորհրդի կրակի մօտ:

Նա վեր առնելով իւր քսակը և դէնքը գնաց արագապէս դէպի առաջ ճանապարհ

ցոյց տալով ընկերներին: Երբ որ նոքա մի ժամ ճանապարհորդութենից յետոյ դուրս եկան անտառիցը հովտի մէջ, նոցա աչքերին երևեցաւ Հնդկայոց բնակութիւն (գիւղ), որ փայլում էր արեգակի վերջին ճառագայթներովը: Այդ մերձակայ խրճիթները կառուցված էին անտաշ փայտերից, և նոցա շուրջը սիմինարի արտեր էին, որոնց նեռումը սևանում էր անտառը: Այդ գիւղն միջումը կար մէկ բաւական բարձրացած շինութիւն, որնոր կառուցված էր աւելի ամուր և գեղեցիկ միւս խրճիթներից: Նադդին հասկացրեց ընկերոջը, թէ այդ է խորհրդի պալատը: Ուրղեցոյցը գնաց ուղղակի դէպի այդ շինութիւնը, և Ավդուստինը հետաքրքրութենով նայում էր նորա շուրջը. որովհետև առաջին անգամն էր նորա պատահելը Հնդկայոց բնակութեան: Խրճիթների առաջև կանգնած էին կանայք և երեխայք. որոնք զարմանքով նայում էին եկողների վերայ: Կարմ-

բակաշների դէմքերի վերայ չէր երևում չարակամութիւն դէպի սպիտակադէմքերը. և շուտով հաղորդակցութիւն ունեցան այդ գեղեցիկ մատաղահասների հետ. որոնց և կամեցան մատնել քաջամարտիկ երիտասարդները:

Այն զինուորները խորհուրդ էին տեսնում, և սպասում էին այդ հիւրերին: Մտնելով խրճիթի մէջ, նոքա տեսան բնակիչների գլխաւորներին, որոնք նստած էին պայծառ կրակի շուրջը: Ամենքը լռեցին, իսկ նրանցից մէկը տեղ ցոյց տուեց այդ բարեկամներին կրակի մօտ: Ավդուստինը և Նադդին լուռ ու մունջ նստան, և սպասում էին գլխաւորին, թէ ինչ պէտք է ասէ նա, որովհետև նրանից առաջ մէկը չէր համարձակվել խօսելու: Նադդին լաւ էր խմանում գեղավարների սովորութիւնները, իւր ընկերոջ էլ առաջուց յայտնել էր: Երբար նստան զինուորները, և լուռ նայում էին

փայլուն աչքերով այդ մատաղահասներին վերայ, որոնք հարբերութենով սանում էին այդ փոքրութեանը: Վերջապէս Ունկասը արտասանեց պատուով.

—Դելավարները ուրախ են սպիտակադէմ եղբարց դալստեան վերայ: Ինչէ հարկաւոր նոր բարեկամներին, զլխաւորի ականջները բաց են լսելու:

Սվդուսանը պատասխանեց, թէ այն պատճառով է եկել այս երկիրը, որ ստանայ ժառանգութիւն այդ երկրի մեծ մասին, և ցոյց տուեց զլխաւորին իւր թղթերը:

—Սյդ իմ ժառանգութիւնս է, աւելացրեց նա. — սպիտակադէմքերի զլխաւորը տուել է ինձ այդ երկիրը, բայց չկամեցայ տիրել նրան առանց հարցանելու Դելավարներից, թէ արդեօք կարող եմ ունենալ իրաւունք, և թոյլ կտան նոքա ինձ արդեօք բնակվիլ իրանց մօտ: Սկսա ես սպասում եմ խնամատուն Ունկասի պատասխանին:

Կարմրակաշին վեր առաւ թղթերը իւր ձեռքը, անքթթելի աչքով նայեց, թէև չը-հասկացաւ նրանց միջի զրուածը: Ցեռոյ բարձրացնելով աչքերը դէպի այդ մատաղ մարդու զեղեցիկ ու պարզ դէմքը արտայայտեց.

—Քո երկիրն է. դու կարող ես ստանալ նրան: Ունկասը չէ արդելում, եղբայր եղբօր մօտ կարող է բնակվիլ:

Սվդուսանը հաղիւ կարողացաւ զսպել ուրախութեան աղաղակը: Նա իմացաւ, որ վայրենաբարքերը կ'յարգեն նրանց. որոնք կարողանում են ծածկել իրանց զդացմունքը, բացի սրանից այդ զինուորների առաջին բարերարութենովը համարվում էր հաստատութիւն:

—Դելավարները ճշմարտասէր են, ասաց նա բաւական սառն սրտով. — ես ցանկանում եմ դտնել նոցա բարեկամութիւնը: Կ'հրամայեն արդեօք իմ եղբայրներս, որ ա-

ռաջարկեմ նոցա ընծաներ։

Եւ չ՚սպասելով պատասխանուցն, նա վեր առաւ իւր ճանապարհի պայուսակը, և դուրս հանեց նրանից շատ փայլուն ընտիր բաներ, որոնք թանկագին էին միայն նոցա համար։ Գլխաւորը ընտրեց իրա համար ամենալաւը, և մնացեալը բաժանեց զինուորներին. որոնք չկարողացան թաղցնել իրանց զարմանքը տեսնելով այդ կեղծեալ և զարդարած մարգարիտները։ Դեղավարները մոռացան իրանց վնասմութիւնը, և չիմացան, թէ ինչպէս շնորհակալութիւն անեն այդ մատաղ օտարականին։ Մինչև անգամ Ունկասը ծիծաղելով ասաց.

— Սպիտակադէմ եղբայրը առատ է և խելօք։ Բաց ձեռքը կ՚ընդունվի յօժարութեամբ, մեր մէջ բարեկամութիւնը կ՚լինի անքակտելի։

Նա նշանացի արեց, բերին մեծ ծխաքաշը, որնոր պատրաստեց ինքն Ունկասը,

ծխեց մի փոքր և տուեց Ավգուստինին։ Սա էլ ծխեց մի երկու անգամ, և տուեց Նադիին, սա էլ ծխելով առաջարկեց իր մօտ նստողին, և այդպիսի կերպով ամէն նստողները ծխեցին հաշտութեան ծխաքարշը՝ նշան բարեկամութեան։

— Իմ եղբայրը այս տեղ իրա տանն է, ասաց Ունկասը.— և ամէն վրան պատրաստ է ընդունելու նրան իւր ընկերովը. ամէն տեղ նա կգտնէ եգիպտացորեան և վայրի կենդանիք կամ թռչուն։

Ավգուստինը շնորհակալութեամբ կամենում էր թողնել արքէն խորհրդի կրակը, ահա յանկարծ երևեցաւ մէկ մատաղ զինուորի մօտն շուաք։ Նադին խրատեց, ճանաչելով Վենոնգին, որի հետ պատահեցաւ անբախտ պատահմունքը անտառի մէջ։ Մատաղ վայրենաբարոն նկատեց փայլուն աչքերով ամէնին, և նորա աչքերը դադարեցան չարութենով երկու ընկերների վերայ։

—Վենոնդա, իմ որդի, ասաց Ունկասը— Այդ սպիտակադէմքերն մեր բարեկամներն են:

—Վենոնդան բարեկամ չի լինել սպիտակադէմքին, պատասխանեց Դելավարը սըխուր դէմքով,— նա կատէ նրանց և կ'լինի հալածող:

Այդ խօսքերը սաստիկ տպաւորութիւն արին ամէնքի վերայ, որոնք ժողոված էին այն տեղ, միայն Ունկասը մնաց զարմացած և սաստիկ նայում էր իւր որդու վերայ:

—Սպիտակադէմքերը իմ եղբարներն են, ասաց Ունկասը.—Այդպէս վճռեց զլնուորների խորհուրդը, և Վենոնդան չի համարձակվիլ հակառակիլ հօրը: Հաշտութեան ծխաքարշը ծխվել է մեր մէջ, և դամահավը թաղված է:

Ամէնքը լռեցին: Դլխաւորը վեր կացաւ և նշանացի արեց սպիտակներին հետևել իրա ետևից, և դուրս եկաւ խորհրդի պատից: Վենոնդան մնաց անշարժ ինչպէս

արձան, չ'համարձակվելով մի բան ասել հօրը. բայց նորա աչքերը փայլում էին տըհաճութենով. Նադդին էլ տեսաւ, որ շատ պէտք է համբերել այդ վրէժխնդիր վայրենաբարոյ անձին այն տեղ:

Աբեգակը արդէն ամենևին ծածկվում էր, գիշերն էլ մթնացնում անտառը և հովիտը: Մատաղ Ավդուստինը և Նադդին լուռ հետևեցին կարմրակաշի գլխաւորի ետևից դէպի նորա խրճիթը, ուր պատրաստվեցաւ կերակուր և ըմպելի, իսկ անկողինները արջի կաշիից էին: Այդ բարեկամացը անկարելի եղաւ քնելու, միայն երբ որ պառկեցան, էլ չը կարացին լսօսելու վերջին անցքի համար:

—Վենոնդի ատելութիւնը սպառնում է մեզ անբախտութիւն, ասաց Նադդին.— Մենք չենք համարձակվիլ բնակվելու այս տեղ, որքան կենդանի է նա, մինչև չանցկենայ նորա չարութիւնը: Եւ ինձ այսպէս է

երևում, որ նա շուտով կմեռնի, եթէ յետ չկանգնէ վրէժխնդրութենից : Զուր տեղ չ'սպանեցի ես նրան անտառումը :

— Մարդասպանութիւնը չի կարող բերել մեզ բաղդաւորութիւն : Երբ որ կ'տեսնէ նա, թէ մենք կամենում ենք հաստատապես լինել նրան բարեկամ, այն ժամանակ կ'ներէ մեր ակամայ սպանումը : Սէրը կը մերժէ տեղութիւնը և ես կամենում եմ, որ նա ինձ սիրէր :

— Դու լաւ չես ճանաչում վայրենաբարոներին. ո՛չ. Ավդուստին, տեսնված չէ բրնաւ, որ կարմրակաշին յետ կանգնի վրէժխնդրութենից : Մեզ պարտ է զգուշանալ Վենոնդից : Նա չի համաձակվել յայտնապէս հակառակել հօրը և ընդդիմաբանել ամէն զինուորներին, միայն չէ դադարելու գաղտնի մեզ հալածելուցը. և չի հանգստանալու մինչև մեզ երկուսներինս չ'սպանէ: Ահա այս պատճառով վատ չէ մեզ կանուխ փակելը նորա առաջ :

— Ես չեմ կամենում արիւն թափել, ասաց հաստատապէս Ավդուստինը :

— Սակայն մենք պարտաւոր ենք պահպանել մեր սեպհական կեանքը, խրատում էր նրան Նադդին :

— Եթէ ամէն մի մարդ մտածէր միայն իւր պահպանութեան և ոչ տարածված ճշմարտութեան համար, աշխարհքը կմնար տգիտութեան խաւարի մէջ : Պէտք է սիրել թշնամեացը, և ներել նոցա, պատճառ նոքա գործում են մեզ այդ չարութիւնը տգիտութենից և անկրթութենից :— Սէրը մի ամենազօրաւոր զէնք է, և ոչ մի չարութիւն կարէ կանգնել ընդդէմ նորա :

Նադդին լռեց մի փոքր և մեկնեց ձեռքը դէպի իւր ընկերը :

— Դու բարի և ազնիւ ես, ասաց նա զգացմունքով :— Ո՞ր տեղ կ'լինեմ ես համոզված այդպիսի խոստումի ձեռքով : Ես էլ հէնց համարա թէ վայրենաբարոներից մէկին

բակաշին արժանի չէր համարում, անդամ պատասխանելը, և չարութեամբ ժպտում էր։ Ավգուստինը առաջարկեց նրան ընծաներ. ոսրոնք ցանկալի էին հնդկացւոց. բայց Վենոնդան ամենևին ուշադրութիւն չէր դարձնում նրանց վերայ. և դեռ էր գցում դէպի մի կողմն։ Երբ որ այդ մատաղ Եւրոպացին դառնում էր որսից, ապա առաջարկում էր գեղեցիկ պատառը իւր թշնամուն, բայց նա գցում էր այն շների առաջին։

Այդ ամէնը լենում էր անարդարար. բայց Ավգուստինը համբերութեամբ տանում էր Վենոնդի բարկութեանը. սպասելով, թէ նորա սիրտը կ'կակղանայ։ Այդ Դելավարների գիւղի մէջ ինքն և Նադդին անբերկիւղ էին իրրև գլխաւորի հիւրերը. և ոչ ոք կ'համարձակվէր նեղացնել նրանց. իսկ անտառումը կարող էին պատահել որոգայթի։ Այդ Եւրոպացիների ամէն զգուշութիւնը նշանակութիւն չունէր վայրենաբարոյի խորամանկու-

եմ։ Հապա թող լինի, ինչոր լինելու է, ես պէտք է հետևիմ քո խորհրդին։ Եթէ մենք կ'սպանվինք որ տեղ և իցէ մեկ անկիւնում, գոնեա մեր խղճմանքը կ'լինի մաքուր.

Ավգուստինը սեղմեց Նադդիի ձեռքը, ուրախանալով, որ իւր ընկերը համաձայնում է իւր դատողութեանը, և նորա երկոքեան ինջեցին բաւական բաղաւորապէս, ինչպէս բարեգործութիւնից յետոյ։

ԳԼՈՒԽ Ե.

Ինչպէս չէ, հաւատաց Ավգուստինը բարութեան և սիրոյ կարողութեան, բայց տեսաւ, որ հեշտութենով չէ կարող կործանել այդ մատաղ վայրենաբարոյի սրտի մէջ եղած ատելութիւնը. ուստի հաստատապէս յանձն առաւ յաղթելու այդ մասին։ Նա փորձեց հարկադրել Վենոնդին, խօսեց նորա հետ քաղցրութեամբ, առաջարկից իւր ծառայութիւնը, սակայն կարմ-

թեան առաջ։ Վենոնդի անհաշտ ատելութիւնը վշտացրեց Ավգուստինին. բայց այդ ժամանակ Ներան մխիթարում էր նորա տատն և չորս տարեկան քրոջ — Նաբելի Ֆայիտի սէրը և բարեկամութիւնը։ Հինց առաջին օրերից այդ աղջիկը յայտնեց մատաղ օտարականին առանձին զգայմունք, և զարմանքով լսում էր նրան. երբ որ խօսում էր նա անյիշաչարութեան, հեղութեան և վեհանձնութեան վերայ։ Վենոնդան զուր տեղ էր աշխատում զարթնեցնել և նորա սրտի մէջ ատելութիւն դէպի սպիտակադէմքերը. և գեղեցկուհի Ֆայիտան պատասխանում էր եղբօրը, թէ ինչու համար պէտք է ատել մեր հիւրերին. նորա բարի են, և քաղցր և սիրոյացնում են ինձ լաւ բաներ։

— Սպիտակադէմքերը խորամանկ են ինչպէս օձ, ասաց վայրենաբարոյ. — Նորա եկել են ծովի այն կողմից, որ առնեն մեր ձեռքից մեր երկիրը. որսան մեր անտառումը։

Վենոնդան երդուել է վրէժխնդիր լինելու օտարականներին, նա քաջ զինուոր է և նորա ձեռքը չի գողալ շանը սպանելիս։

Երկչոտ աղջիկը դնաց շուտով Ավգուստինի մօտ, որ զգուշացնէ նրան իւր եղբօր անչափ չարութեան մասին. սակայն Ավգուստինը միամտացնում էր ասելով.

— Քո եղբայրը չէ ճանաչում ինձ, երբ որ նա կ'սովորի կարդալ, ինչպէս կամենում եմ, այն ժամանակ կ'սիրէ ինձ։

Սակայն Վենոնդի ատելութիւնը մեծանում էր, օրերը անցնում էին. մանաւանդ դժուար էր մնալ այն կողմում. որովհետև այդպիսի թշնամու հետ երկիւղալի էր ապրիլ ամէն մի վայրկեան։ Դա հինց վշտացնում էր Ավգուստինին և զայրացնում էր Նադդիին. բայց ինչ պէտք էր արած, երկուսն էլ շարունակեցին կենալ Դելավարների մօտ։

Մի անգամ, Վենոնդան մի քանի օր չերևեցաւ, Ավգուստինը հարցրեց Ֆայիտին,

որ տեղ է նա. Ֆայիտան էլ պատասխանեց, թէ եղբայրը գնացել է որս, և կ'մնայ այն տեղ դեռ երկար ժամանակ, որ ձեռք բերէ ձմեռվան մսի պաշար:

— Ուրեմն ես էլ կերթամ, ասաց Ավգուստինը, ես կենցաղավարում եմ ձեզ մօտ, և ամէն բան պատրաստ եմ տեսնում, ուստի պէտք է գնամ վայրի կենդանիք որսալու ձեզ համար: Այսօր ես ման կ'գամ անտառի մէկ մասը, և կբերեմ ինչպիսի և իցէ վայրի կենդանի:

Աղջիկը վախեցաւ Ավգուստինի այդ դիտաւորութենից, և սկսաւ համոզել նորան մնալու գիւղի մէջ, մինչև իւր եղբօր գալը անտառից:

— Վենոնդան լաւ օրսորդ է, ասաց գեղեցկուհի Ֆայիտան շփոթված կերպով, նա էլ կ'սպանէ նետով բաւական վայրենիք: Սպիտակ եղբայրը չպէտք է թողնէ ինձ, բարի Ավգուստինը կ'պատմէ ինձ իւր հայրենեաց վերայ:

— Ես երեկոյեան կ'պատմեմ քեզ, երբ յետ կ'դառնամ որսից: Ես էլ նմանապէս որսորդ եմ, չեմ կամենում նստել տանը, ինչպէս կին, երբ զինուորները վազում են եղջերուների և արջերի հետևից:

— Ֆայիտան խնդրում է սպիտակ եղբօրը չգնալ անտառը, այն տեղ երկիւղալի է:

— Ես առաջին անգամը չէ, որ գնում եմ որս, ասաց Ավգուստինը ժպտալով.—ես մի անգամ չեմ պատահել փորձանքի: Ուստի ասայի ես քեզ, թէ ով կատարում է իւր պարտքը, նա ամենևին չի վախենալ:

— Ինչ և իցէ իմ եղբայր, չպէտք է գնաս անտառը, խրատում էր այսպէս աղջիկը.—եթէ քեզ պատահին շատ վայրենի կենդանիք ու շատ օրսաս նրանցից, Դելավարները կ'բարկանան:

Ավգուստինը կարելի է համոզէր աղջկայ ապաշանքից. որնոր յիրաւի պատճառներ արգելելու նրան անտառը գնալ,

բայց այդ բոպէում մօտեցաւ նրանց Ունկասը, և խմցաւ թէ ինչու համար են խօսում. ասաց.

— Դելլավարները չէն նախանձիլ լաւ որսորդներին, այլ կ՝յարդեն նրանց: Սպիտակ բարեկամի հաւատարիմ աչքերը, ամուր ձեռքը, հրային զէնքը և նորա օգնութիւնը մեզ օգտաւէտ են: Նա լաւ կանէ, եթէ գնայ որս:

Ֆայտան էլ չ՝համաձակեցաւ համոզելու Ավգուստինին, բայց միայն հանդարտօրէն շշնջեց նրան այս խօսքերը.—

— Զգուշացիր Ավգուստին, անտառումը թափառումէ չար գայլը:

Արդէն նա հասկացաւ թէ ինչու համար էր համոզում իրան այդ աղջիկը: Վեռնոնդին կուզումէին շատերը գայլ, եթէ պատահի նրան, կարելի է փորձանք լինի, մանաւանդ թէ օտարականի համար, որին նա հէնց ատումէր: Ավգուստինը վեր առաւ

իւր հետ Նադդինին, և խոստացաւ յետ դառնալ որսով: Ֆայտան ճանապարհ դցեց նորան հոգուց հանելով, բայց Ավգուստինը միամտացնումէր նրան հաւատացնելով, որ չէ պատահիլ իրան ոչինչ ձախորդութիւն:

Որսը բաւական յաջողակ եղաւ: Անտառումը ճայթումէին այդ երկու ընկերների հրացանների ձայները: Նադդին փախցրեց եղջերուն, երբեմն էլ ձայնումէր Ավգուստինին: Շուտով նոքա անցան այնքան տարածութիւն, որ նոցա ձայնը անլսելի էր լինում միմեանց: Ավգուստինը էլ չէր լսում ընկերոջ ձայնը. անտառումը թագաւորում էր լռութիւն. միայն ծառերի գլուխներն էին փոքր ինչ ձայն հանում, այո՛ այն տեղ և կարկաչումէր գետը: Հեռի լսուեցաւ հրացանի թոյլ ձայն, Ավգուստինն էլ այդ ուղղութիւնով գնաց, երբեմն էլ ձայն տալով, բայց պատասխան չէր լինում: Կարելի է Նադդին գնացել է դէպի գիւղը, մտածեց

Ավգուստինը, և նայելով դէպի արեգակը՝ քցրեց իւր հրացանը, և ճանապարհ ընկաւ դէպի գիւղը: Նա դուրս եկաւ անտառումը մէկ հրապարակի մէջ. նորա մէջ տեղ բարձրացած էր մի մեծադիր ծառ, որը շրջապատած էր թանձր թփերով: Այդ վեթխարի ծառի արմն այնքան հաստ էր, որ հինգ մարդ չէին կարող շրջապատել: Ավգուստինը ակամայ զուարճանում էր այդ անտառի թագաւորի մեծութեան վերայ. որի ճիւղերի մէջ կարող էր թաղնուիլ պանտեր, և այն տեղից թռչել իւր զոհի վերայ:

Յած ճիւղերի մէջ լսուեցաւ շաչիւն, Ավգուստինը զննեց ծառի ճիւղերը կասկածելով, և աշխատում էր գուշակելու, թէ ինչպիսի երկիւղ ահա սպառնում էր իրան, և բռնեց հրացանը ձեռին պատրաստ: Նա նկատեց կանաչի միջից սև աչքեր, և տեսաւ շարժումն թփերի մէջ, և ընկաւ գետնի վերայ: Հէնց այդ վայրկենումը սուլելով անցաւ նետը, և կ'ցցուէր Ավգուստինի կրծքի մէջ, եթէ նա չ'նախազգուշանար, յետոյ թռաւ մերձակայ ծառի ետևը և թաղնուեցաւ:

— Դա չար գայլն է, ասաց Ավգուստինը, նա կամենում էր սպանել ինձ: Նրան շփոթեց վ.ինոնդի այդ նոր չարագործութիւնը՝ Սպասելով կրկին յարձակմանը իւր վերայ: պատրաստեց հրացանը, և անքթթելի աչքով նայում էր դէպի այն հոյակապ կաղնին. որտեղից թռաւ նետը: Այն տեղ թփերի մէջ եղաւ մի թեթև շարժմունք, նայելով էլ կաղնիի բարձր ճիւղերի մէջ և նշմարվեցաւ մէկ մեծ դեղնագոյն բան, և երևեցաւ յանկարծ պանտերի մեծադիր և ահարկու գլուխը. որը նայում էր դէպի ցած յիրաւի դէպի վ.ինոնդան—դէպի իւր վերայ նեռ ձգողը, որնոր ցածից չէր տեսնում, թէ իրա համար պատրաստված է պատառող դաղանը. և հէնց աշխատում էր կրկին արձա-

կել նեռը Ավգուստինի վերայ։

Ավգուստինը կարող էր նախատես լինել թէ ինչէ լինելու մի բոպէի միջում, այն է պանտէրը պիտի պատառէր Վենոնդին և այն ժամանակ ինքն էլ կարող էր հանգստանալ, և կարող էր մոռանել ու խորհուրդ տեսնել իւր ընտանեաց այն տեղ բնակցնելու մասին, սակայն աղնիւ երիտասարդը երկար չչփոթեցաւ։ Նա մոռացեց առաքինի մարդու պարտքը—ներելը իւր թշնամեաց, և մտադիր եղաւ ազատելու դայլ—Վենոնդին պանտերի ճանկից։ Զարհուրելի գաղանը արդէն պատրաստվել էր թռչելու իւր զոհի վերայ, և նորա աչքերը լցուել էին արիւնով, իսկոյն թնդաց հրացանի ձայնը։ Պանտերն սկսաւ բառանջել և ընկաւ Վենոնդի ոտերի տակ, որին 'ի հարկէ մեծ զարմանք պիտի պատաճ լինէր։ Ավգուստինի գնդակը ուղղակի անցել էր գաղանի աչքի միջից, ու նա ընկաւ Ջարդված գլխով։

Ուրախանալով կարմրակաշեի անշարժ լինելովը այդ Եւրոպացին մոտեցաւ կաղնի ծառին, շարժեց թուփերը, և կռացաւ պանտերի վերայ, որ սոյդը իմանայ արդեօք կենդանի է, թէ ոչ։ Երբ որ բարձրացրեց իւր գլուխը, տեսաւ որ Վենոնդան այնպէս էր անհերևութացել անկատելի կերպով, մինչև հետքն էլ չէր երևում։ Զուր տեղ էր Ավգուստինը ուշադրութեամբ ականջ դնում, որովհետև այդ վայրենարարն այնպիսի արագութեամբ էր հեռացել, որ անկարելի էր գուշակել թէ դէպի որ կողմն է անհերևութացել։

— Ինչու փախաւ նա ինձնից, մոռացեց Ավգուստինը։ Նա հասկացաւ, որ ես փրկեցի իրան մահից։ Յանկանում էի ես իմանալ, թէ արդեօք ինչէ զգացել այդ վայրենարարն։ Արդեօք գութ շարժեցաւ նորա սրտում, թէ տակաւին մնացել է իւր

առաջվայ չարութեան և կատարեալ վրէժ-
խնդրութեան մէջ:

Նա թէպէտ չ'կարողացաւ գտնել պա-
տասխան այդ հարցին, սակայն ուրախ էր և
բաւական, որ բարի գործ էր գործել,
և գոհացաւ իւր վիճակից, որ իրան յաջո-
ղեցաւ փրկելու իւր թշնամուն:

Ավգուստինը կանգնել էր այսպիսի մտածմունքով պատերի առաջ, շուտով լսեց ոտի ձայն, և Նադդին մօտեցաւ իրան շփոթված և վաստակած: Նա էլ նոյնպէս որոնում էր իւր ընկերոջ անտառումը, և գտաւ նրան հրացանի ձայնովը: Նադդին տեսնելով մեծագիր պատերին, գլուխը ջարդուփշուր եղած, հարցրեց իւր ընկերոջ, նա էլ պատմեց նրան. միայն թէ ինչպէս է յաջողութենով սպանել գաղանին, և Վենոնդի համար ոչինչ չ'ասաց, պատճառ չէր կամենում պարծենալ իւր բարի գործովը:

Ուրախութեամբ տուն դնացին այդ երկու ընկերները, սիրուհի Ցայիտան էլ դուրս եկաւ նոցա առաջ ուրախութեամբ: Պանտերին տարան Դելավարների գիւղը, Ավգուստինին կոչեցին մեծ որսորդ, յայտնելով ընկեր ընկերոջ նորա քաջութեան գործը: Ավգուստինը պարտաւորեցաւ մի քանի անգամ պատմել, թէ ինչպէս է սպանել այդ զարհուրելի գաղանին, բայց չէր յիշում ոչինչ Վենոնդի համար, որնոր դեռ անտառումն էր և չէր դարձել գիւղը:

ԳԼՈՒԽ Է.

Կարելի էր մտածել, վեհանձն Ավգուստինի վարվողութենից յետոյ, որ փրկել էր Վենոնդի կեանքը, թէ իսկոյն այդ վայրենարարն կ'դադարի սպիտակդէմքերին ատել, կ'դադարի նոցա դէմ չարութիւն գործել, և գոնեա շնորհակալութիւն կմատուցանէ իւր փրկողին, սակայն և ոչ մէկը ե-

ւանդութիւնը անբուժելի է։ Զուր տեղ կանչվեցան կախարդներ, հմայելու համար հիւանդին, որը պարկած էր արջի մորթի մէջ, նորա տաքութիւնը չէր դադարում, և դեղաբարները տխուր սպասում էին իւրեանց սիրելի գլխաւորի վախճանելուն։

Ավգուստինը դառնալով. որսից, տեսաւ նորա ամէն ազգականներին յուսահատութեան մէջ. և խեղճ Ֆայիտան դուրս եկաւ դէպի Ավգուստինը արտասուք թափելով։

— Ի՞նչ պատահեցաւ քեզ փոքրիկ քոյր, հարցրեց Ավգուստինը, չմանալով ոչինչ Ունկասի հիւանդութեան համար. — ինչու են լաց լինում այդ գեղեցիկ աչքերդ։

— Հայրս սաստիկ հիւանդ է, չար հոգին չէ կամենում թողլ տալ նրան, նա մեռնում է։

— Ցաւ ինձ նորա մօտ, ասաց Ավգուստինը.—չար հոգին կարելի է յաղթվի բարիից։

Աղջիկը նայում էր դէպի նա երկիւղով և յուսով ու հարցրեց.

— Սպիտակ եղբայր, կարո՞ղ ես բժշկել նրան։

— Այո՛, ես սովորել եմ և այդ, պատասխանեց Ավգուստինը, ուրախանալով, որ կարող էր արդէն ծառայութիւն ցոյց տալ Վենոնդի հօրը։

Ֆայիտան տարաւ նրան հիւանդի մահճի մօտ։ Ունկասը ցնորքի մէջ էր, և չէր ճանաչում նրան։ Ավգուստինը տեսաւ, որ սաստիկ է, բայց միասակար չէ այդ տենդը, որնոր կարելի է բժշկել յայտնի բժշկական հնարներով։

— Սիամիա կաց, քուրիկ. ասաց նա աղջկանը.—երեք օրից քո հայրը կ'առողջանայ։

Նա գնաց անտառը, ժողովեց այն կանաչներից և արմատներից, որոնք ճանաչում էր, բերաւ, դեղ պատրաստեց, և տուաւ հիւանդին խմելու, ինքն էլ մնաց նորա մօտ։

Մի քիչ ժամանակից յետոյ հիւանդը սկսաւ կազդուրել: Նա քնում էր հանդարտ, և երբ զարթնում էր, նորա աչքերը մաքուր էին լինում, օրըստօրէ տաքութիւնն էլ պակասում էր: Ավգուստինը տուեց նրան նոր դեղ էլ, որ հիւանդութեան առաջը փակէ, և ինչպէս խոստացաւ աղջկանը, այնպէս էլ եղաւ—Դեղավարների գլխաւորը երբէք օրվայ միջում առողջացաւ, ինքն էլ հէնց զարմացաւ նորա վերայ, որ փրկվեցաւ մահից:

Այդ բժշկութիւնը փառաւորեց Ավգուստինին: Ամէնքը հրաշք էին կարծում այս. ամէն զինուորները առանձին յարգանք էին ցոյց տալիս մատաղ բժշկին, միայն Վենոնդան չէր զոհանում այդ սպիտակադէմ մարդից իւր հօր բժշկելու համար, և շարունակում էր դեռ թշնամաբար նայելու Ավգուստինի վերայ:

Յանկարծ մի օր Վենոնդան ինքն էլ ընկաւ սաստիկ տենդի մէջ: Նորա աչքերը փայլեցան, ցրտութիւնը արագութեամբ անցաւ նորա երակների միջով, զօրութենից թուլացաւ, զուր նա մերժել էր կամենում ցաւը իրանից. նորա գլուխը պտոյտ տուեց, ծնկները ծալվեցան իւր տակ և ինքն ընկաւ որպէս անդգայ: Զահի հարեալ Ուենկասը թռաւ դէպի Ավգուստինը արտասուքով, և խնդրեց նրան փրկելու իւր որդուն, նա էլ փութացաւ հիւանդի մահճի մօտ: Ես զարմանում եմ քո վերհանձնութեանդ վերայ, ասաց Նադդին.—Մի՞թէ դու տակաւին հաւատում ես այդ վայրենաբարոյ զոյլանն, թող նա մեռնի, շատ հարկաւոր է քեզ բժշկել նրան: Այո՛ նա չի մեռնիլ, որովհետև երկաթի առողջութիւն ունի, (այս ինքն շատ պնդակազմէ):

Ավգուստինը միայն սեղմեց նորա ուսը, պատասխան չէր կամենում հակառակել ընկերոջ և ապացուցանել նրան, թէ հիւանդութեան

մէջ չի ճանաչել նա թշնամուն, և այն չարչարվողի մէջ, որին պարտաւոր է օգնել մարդասիրութեան պարտաւորութեամբ: Նադդին շարունակեց քրթմնջել, և յիմար անուանել իւր ընկերոջը նորա վեհանձնութեան և ինքնուրացութեան համար: Ուշադրութիւն չդարձնելով դորա վերայ, Ավգուստինը հոգաց հիւանդի համար, իբրև հարազատ եղբօր, շինեց նորա համար դեղ, զովացրեց նորա տաքացած գլուխը սառն ջրով, տաքացրեց սառած ձեռքերը:

Եւ Վենոնդան սկսաւ առողջանալ, բայց ոչ մի բանով, ոչ մի հայեացքով չէր արտայայտում իւր շնորհակալութիւնը մատաղ բժշկի հոգացողութեան փոխարէն: Նա շատ անդամ իւր կեանքը անցուցանում էր անտառումը. որ չպատահի Ավգուստինին: Նադդին սաստկապէս յանդիմանում էր այդ անզգոնակ վայրենարարոյ անձին, բայց Ավգուստինը պատասխանում էր հեզութեամբ:

Մի դատիր ուրիշներին, և քեզ չդատեն: Ինձ համար ցաւ է այն, որ Վենոնդան մնում է անհոգացող. բայց ես բաւական եմ դրանով, որ կարողանում եմ անել նրան բարերարութիւն:

Մի քանի Հնդկացիք էլ հիւանդացան, Ավգուստինը բժշկեց նրանց էլ. ուստի փառաւորում էին նրան ամէնքը, և համարում էին մեծ բժիշկ, բարեհոգի, և նորա համբաւը տարածվեցաւ կարմրակաշիների մինչև ուրիշ գիւղերն էլ:

Մի անգամ Պեկոտների (սոքա ևս վայրենաբարոների ազգիցն են) ցեղից մարդիկ եկան և խնդրեցին, որ մեծապատիւ սպիտակադէմ բժիշկը գնայ իրանց հետ և բժշկէ իրանց գլխաւորի որդուն: Նադդին ասաց իւր ընկերոջ.

— Մի գնար, խնդրում եմ, քեզ կ'տանեն այնպէս հեռի, որ չես կարող դառնալ այն տեղից:

Բայց Ավգուստինը ականջ չդրած իսկոյն ճանապարհ ընկաւ Պեկոտիների հետ։ Մի օրում նորա եկան գիւղը, և մատաղահաս բժիշկը իսկոյն յայտնեցաւ հիւանդին, որոնք պարկած էր նոյնպէս տաքութեան մէջ։ Բուժշկեց նրան և մի քանի ուրիշ հիւանդներին. և այն տեղ ևս յաջողեցաւ Ավգուստինին։ Վայրենաբարոներն էլ բերում էին նորա համար այդ պատճառով շատ ընծաներ զարդարած վայրենի գազանների կաշուից, և զարմանում էին, որ այդ սպիտակագէմ բժիշկը չէր ընդունում ոչինչ. միայն խնդրում էր իրանց բարեկամութիւնը։ Պեկոտիների գլխաւորը առաջարկեց նրան ճնալու իւր մօտ, խոստանալով սիրել նրան իբրև որդու. բայց Ավգուստինը պատասխանեց նրան, թէ ունի հեռի Աղի ծովի այն կողմում մայր և փոքրիկ քոյրեր. որոնք անհամբերութեամբ սպասում են իր յետ դառնալուն և որոնց պարտաւոր է պահպանել, և

կառուցանել նոցա համար բնակութեան տեղի։ Նա աւելացրեց և այն, թէ ունի կալուած Դելավարների գիւղի մօտ, և միայն Վենոնդի ատելութիւնը նեղացնում է իրան վերաբնակելու այս տեղ։

Պեկոտիները ուրախացան, որ այդ մեծ բժիշկը բնակվել է կամենում իրանց մօտ, և սպառնացան սպանելու Վենոնդին, թէ նա կ'կամենայ որպիսի և իցէ չարագործութիւն գործել ընդդէմ սպիտակագէմքերին։

Երբ վերջացաւ հիւանդութիւնը այն գիւղի մէջ, Ավգուստինը կամենում էր կրկին դառնալ Դելավարների մօտ, խնդրեց Պեկոտիների գլխաւորին, որ տայ իրան ուղեցոյց։ Նոցա գլխաւորը ժողովեց այդ ցեղի ամէն զօրականներին խորհուրդ, որ հրաժարական ողջոյն տան սպիտակագէմ բժշկին, և զոհանան կրկին պատուով նորա բարերարութեան համար։ Վառեցին մեծ կրակ, նստան նորա չորս կողմը, և նստացրին Ավգուստի-

նին գլխաւորի մօտ, հաշտութեան ծխաքարշը շրջան տուաց և այս տեղ: Յետոյ գըլխաւորը վեր կացաւ տեղից, և ասաց.

— Սպիտակ եղբայրը զօրաւոր է ամէն կախարդներից: Նա եկել է Աղի Ծովի այն կողմից, և փրկեց մեր զօրականներից շատերին մահից: Սպիտակադէմքերը խմստուն և բարի են: Պեկոտինները շնորհակալ են. և կը խոստանան ամենևին չկռուիլ սպիտակադէմքի հետ, ոչ էլ յարձակվել նորա իշխանութեան կալուածի վերայ: Մեր մէջ դամահավը թաղված է յաւիտեան: Երբ որ մեր սպիտակ եղբօրը հարկաւորվի մեր օգնութիւնը, Պեկոտինները ամէն ժամանակ պատրաստ են պահպանել նրան, մինչև անդամ մեռնել նորա համար: Պեկոտինները կ'պահպանեն իւրեանց խօստմունքը: Նոցա լեզուն խորամանկ չէ, արտայայտում է, ինչ որ զգում են: Մենք ամէնքս էլ կ'սիրենք սպիտակադէմքին, և պատրաստ ենք այս ապացուցա-

նել գործով: Մեծ հողին կ'պատժէ մեզ, եթէ մենք երախտամոռ և անզգոնական լինինք, և յայս ունինք. որ սպիտակ եղբայրն էլ Պեկոտիներին չի մոռանալ:

Միւս զօրականներն էլ նոյնպէս արտայայտեցին իւրեանց զգացմունքը Ավգուստինին, Ավգուստինն էլ շարժվեցաւ նոցա քաղցրութեամբը, այս բոպէում ահա յանկարծ վայրենաբարոների միջից երևեցաւ մի սպիտակ դէմք, և զարմացած Ավգուստինը աղաղակեց.

— Նադրի, ի՞նչ է պատահել քեզ, դու ի՞նչպէս եկար այս տեղ: Վայրենաբարոները հեռացան մի փոքր և նայում էին հետաքրքրութենով միւս սպիտակադէմ անձին վերայ: Նադրին գունատված էր և շփոթված և մի քանի խօսքով պատմեց իւր ընկերոջ Վենոնի նոր գործած չարութեան համար:

— Այդ դժուար է, ասաց Ավգուստինը.— Մենք չենք կարող էլ դառնալ Դելավարների

մօտ։ Մեր բախտիցը ես գտել եմ այս տեղ նոր բարեկամներ, որոնք հէնց արդէն առաջարկեցին ինձ պաշտպանութիւն։ Եւ բռնեց Նադդիի ձեռքից, դարձաւ նա դէպի Պեկոտիները, ասելով.

— Սա իմ ընկերս է։ Նա խնդրում է քաջ Պեկոտիների հովանաւորութիւնը. և ցանկանում է ծխել հաշտութեան ծխաքարշը։

— Մեծապատիւ բժշկի ընկերը կ'լինի և մեր ընկերը, պատասխանեց գլխաւորը։

— Իմ ընկեր, ասաց Ավգուստինը. եկ խնդրենք Պեկոտիներից ապաստանարան իրանց գիւղումը, որովհետև մենք էլ չենք կարող դառնալ Դելավարների մօտ։

— Սպիտակադէմքները կարող են մնալ մեր մօտ։ Մինթէ Դելավարները անպատիւ են արել բժշկի ընկերոջ։

— Դելավարները ազնիւ են և բարի, միայն նոցա մէջ կայ մէկ չար գայլ, որ ատում է մեզ, և համարում շուն։ Իմ ընկերը արջ է սպանել որսումը, բայց գայլը կամեցել է խլել նրանից այդ որսը, և այդ հակառակութեան պատճառով վիրաւորել է դամահավգով։ Նա էլ չի կարողացել բռնել հրացանը իւր ձեռքում, որովհետև գայլը յարձակվելով վիրաւորել է նորա ուսը և փախել է։ Ցեսէք ահա վէրքը։

Եւ երբ բացեց Նադդիի արիւնաթաթախ ուսը, թնդաց բարկութեան աղաղակ, նոյնպէս էլ գլխաւորը աղաղակեց.

— Դելավարները փախցրին քո ընկերոջ, ինչպէս շան, նոքա քեզ են անպատիւ արել։ Պեկոտիները կ'պաշտպանեն իրանց, բարերարին և նորա ընկերոջ։

— Մենք վրէժխնդիր կ'լինենք, երախտամոռ Դելավարներից։ Պեկոտիները քաջ ազգ են, նոքա թոյլ չեն տալ նեղացնելու իրանց բարեկամներին, աղաղակում էին զօրականները։

մարդի յանցանքի համար։ Ինչու համար պէտք է թափել անմեղ արիւն։

Գլխաւորը անդամ չ'պատասխանեց, որովհետև վայրենաբարոների սովորութեան համեմատ, եթէ պատերազմ վճռուած լինի, ոչ ոք չպէտք է յետ կանգնէ նորանից։ Մատաղ պատանեակը հէնց յուսահատութեան մէջ աղաղակումէր.

Դելավարները չէն սպասում յարձակման։ Նոքա էս իմ բարեկամներն են։ Ես չեմ կամենում այդ բանը, այդ երկիւղալի է։

— Պեկոտները օձ չեն, բայց քաջ զօրականներ են, ասաց գլխաւորը, ես արդէն կանուխ եմ ուղարկել սրընթաց զօրականներ արեան մէջ թաթախած նետերով։ Դելավարները զգուշացած են, և կարող են պատրաստվել կռուի համար։

Այդ բանում գլխաւորը այնպէս սաստիկ նայումէր Ավգուստինի վերայ, որ նա

խոնարհացրեց իւր գլուխը, և վախենումէր, որ մի գուցէ բարկանայ գլխաւորը իւր հակառակաբանութեան վերայ։ Ապա դարձաւ դէպի Նադդին և հարցրեց.—Մենք ի՞նչ անենք։

— Լռել հարկաւոր է, ասաց Նադդին, մենք չենք կարող յետ կանգնեցնել վայրենաբարոներին, միայն կարող ենք հետևիլ նոցա. կարելի է վերջին վայրկեաններումը մենք ձեռք կ'բերենք ոմանց, կամ թէ կ'ազատենք մի քանիսին մահից։

Երկոքեան էս շտապեցան վեր առնելու իւրեանց զէնքը, և հետևեցան վայրենաբարոների ետևից, որոնք արդէն մտել էին անտառի մէջ, և հանդարտօրէն գնումէին անտառի նեղ ճանապարհներովը։

ԳԼՈՒԽ Ը.

Ճանապարհի կէսումը երեկոյացաւ, Պեկոտները մնացին հանգստանալու։ Վառե-

ցին խարոյիներ, և չորս կողմում բնակեցան զօրականները, պահապաններ էլ կարգվեցան ամէն կողմի վերայ հսկելու, որ թշնամիները յանկարծակի չկարողանան յարձակվել նոցա վերայ: Ամէնքը ննջեցին և 'ի քուն մտին իւրեանց զէնքերը բռնած ձեռներին, այն պատճառի, որ ամէն դիպուածքում պատրաստ լինին: 'Իվերայ այսր ամէնայնի խորին հանդարտութիւն էր և կարծես թէ անտառն էլ քնել էր: Արեգական առաջին ճառագայթները երևելիս կարմրակաշիները պատրաստ էին, և զգուշութեամբ շարունակեցին ճանապարհը չկանգնելով և չխանգարելով կարգը:

Զօրքը արդէն մօտացել էր Դելավարների գիւղին, ահա յանկարծ լսուեցաւ իրրև բուի ձայն, նոցա զլխաւորն էլ պատասխանեց նոյն ձայնով: Նագդին ասաց զարմացած Ավգուստինին, թէ այդ նշանակում է, որ Դե-

լավարները դուրս են եկել իւրեանց գիւղից, և գալիս են Պեկոտիների առաջ: Արդարև, մեծ հրապարակում կանգնեցան Դելավարները կատարեալ զինուորված, և նոցա առաջին Պեկոտիները:

Ավգուստինը կարծում էր, թէ նորա խոկոյն կ'յարձակվին մէկ մէկու վերայ, և կը-սկսվի արիւնհեղութիւն. բայց նորա կարծիքը չկատարվեցաւ:

Երկու ազգերն էլ շուտ կանգնեցան անշարժ մէկ մէկու առաջև: Պեկոտիների զըլխաւորը խաղաց դէպի յառաջ, շրջապատած մի քանի զօրականներից, և Դելավարների մէջ եղաւ շարժումն: Ազնիւ ծեր Ունկասը դուրս եկաւ առաջ կանաչ ճիլդ բռնած ձեռին (որ հաշտութեան նշան է), և հանդարտորէն սկսաւ մօտենալ Պեկոտիների զըլխաւորին, որ և թողեց զէնքը, սպասելով թէ ինչ պէտք է ասէ Դելավարը: Ավգուս-

ամենը զարմացած տեսաւ Դելավարների մի-
ջում իւր թշնամի Վենոնդին կապած, խո-
նարհեալ գլխով:

Երկու գլխաւորները կանգնեցան մէկ մէ-
կու առաջև, և Ունկասը արտասանեց պատ-
ուով.

— Պեկոտիների դեսպանը հասաւ Դելա-
վարների մօտ յայտարարութենով թէ պա-
տերազմը յայտնված է մեր մէջ: Ես չեմ կա-
մենում թափել կարմիր արիւն: Դելավար-
ները քաջ են, Պեկոտիներն էլ չեն վախե-
նալ կռուից, բայց մենք պէտք է լինենք
ճշմարիտ: Ես կամենում եմ իմանալ, թէ ին-
չու համար է մեր եղբայրը մեզ կռիւ յայտ-
նում:

Պեկոտիների գլխաւորը լռեց մի փոքր,
որպէս թէ պատասխան էր մտածում, յետոյ
պատասխանեց.

— Ունկասը իմաստուն գլխաւոր է: Նա

պատիւ է տուել իւր թշնամիներին, և մեծ
հոգին հոլանաւորում է նրան: Պեկոտիներ-
ը արեան ծարաւի չեն, բայց նորա չեն կա-
մենում, որ չար գայլը համարձակվի վնաս-
սելու իրանց բարեկամներին:

Չար գայլը բռնուած է, էլ չի կարող այ-
սուհետև վնաս տալ, ասաց Ունկասը, պահ-
պանելով իրան համբերութեամբ, բայց շեր-
թունքը դողումէին, և նորա կուրծքը չա-
փազանց վրդովված էր.— Ահա նա. աւելաց-
րեց Ունկասը, և ցոյց տուեց մատով կա-
պած որդու վերայ.— Մէկ գայլի պատճա-
ռով չ'պէտք է թափել անմեղ արիւն: Թող
իմ եղբայրս վեր առնէ նրան, որին ահա ես
տալիս եմ իրան:

Եւ զօրականները խիստ մօտացրին Վե-
նոնդին Պեկոտիների գլխաւորի մօտ. որնոր
չէր համարձակվում նայելու իւր հօրը, և
գունատված ծեր հայրը զուր հեռևում էր

թաղցնել իւր զգալի նեղութիւնը, իմանալով թէ ինչ վիճակ է սպասում իւր որդուն:

Պեկոտիները վեր առան Նոան իբրև գերի, և տանում էին անտառի թանձր տեղով. այն ժամանակ նոցա գլխաւորը ասաց—Ունկասը իմաստուն գլխաւոր է: Նորա սիրտը լայն է և ճշմարիտ: Կարմրակաշիները ամենքեան եղբարք են, և դամահվդը պէտք է կրկին թաղվի: Զօրականները յետ կ'դառնան դէպի իւրեանց բնակարանը, զէնքն էլ կ'դադարի:

Գլխաւորները բարեկամաբար հրաժարական ողջոյն տուին, և զօրքերն շարժվեցան դէպի յետ, Ավդուստինը թէպէտ կամեցաւ մօտենալ Ունկասին և մխիթարել Նոան, բայց չ'համարձակեցաւ բանալ Նոա սրտի վիշտը. և այդ պատճառով չ'սեղմելով անգամ զօրականներից մի քանիսի ձեռքը, որոնք ուրախ էին այդ դիպուածքի վերայ,

շտապելով հեռացաւ Պեկոտիների եռևից, այն նպատակով, որ իւր ամէն կարողութիւնովը ջանայ փրկել Վենոնդի կեանքը: Նա հասկացել էր, որ վայրենաբարոներումը սաստիկ պատիժ է լինում, ուստի և պէտք էր այդ մատաղ թշնամուն համբերել այդ ահարկու չարչարանացը: Նա գիտէր ժանաւանդ թէ վայրենաբարոները ինչպէս խիստ են և անողոքելի, համարեա թէ յոյս չունէր նեղումն խնդրելու Նոանցից իր թշնամու համար: Սակայն և յետ չ'կանգնեցաւ իւր դիտաւորութենից և հասատ մտադիր եղաւ գործ դնելու իւր ամէն միջոցները, և խնդիրը, մինչև անգամ և յանդիմանութիւն որ փրկէ թշուառականի կեանքը. օրին ուներ պատճառ ասելու. բայց միայն խղճում էր: Ամէնից առաւել ցաւում էր Նոա անբախտ հօր համար:

Պեկոտիները ուղևորվեցան դէպի իւրեանց

գիւղը, և տարան Վենոնդին կապած զօրա-
կանների միջում: Ավգուստինը մնացեալ նը-
րան և հանդարտօրէն խօսեցաւ նորա հետ,
բայց վայրենին չարութեամբ նայում էր նո-
րա վերայ, և մերժում: Ցեմնելով, որ չի
կարողանում ոչինչ օգնել, հեռացաւ գնաց
դէպի Նադդին, և սկսաւ հարցուփորձա-
նել նրանից, թէ արդեօք ինչէ սպասում
Վենոնդին: Այդ դիպուածը որովհետև ան-
սովոր էր, ուստի Նադդին չկարաց հաստատ
իմանալ, թէ ինչ պէտք է անեն վայրենաբա-
րոները այդ գերիի հետ: Եւ այս պատճա-
ռով Ավգուստինը հաստատապէս դիմեց դէ-
պի Պիկատինների գլխաւորը. որի անունն էր
Մատորէ, և հարցրեց նրանից, թէ ինչ պէտք
է անեն Վենոնդին:

— Դու այդ կ'տեսնես, պատասխանեց Մա-
տորէն.—Սպիտակադէմքերը կ'ազատվեն իւ-
րեանց թշնամու ձեռքից:

Էլ ոչինչ չասաց, Ավգուստինն էլ չհա-
մարձակեցաւ հարցնել աւելի: Նրան նե-
ղացնում էր այդ դէպքը, վասն զի չէր կարո-
ղանում նորա առաջը փակել. և չգիտէր,
թէ ինչպէս ազատէր այդ թշուառականին ի-
րան որոշված պատժիցը, և այնքան անգութ
էր, որ պատճառ լինէր զրկելու նրան կեան-
քից:

Երեկոյեան նոքա հասան իւրեանց բնա-
կարանը, և ամրափակեցին գերի Վենոնդին մէկ
առանձին տան մէջ, և կանգնեցրին նորա
վերայ պահապաններ: Ավգուստինը և Նադ-
դին այնքան նեղացած էին երկար ման դա-
լուցը, որ ընկան մորթիների վերայ և խոր
քնեցան:

Արեգակը արդէն բարձրացել էր, երբ որ
նոքա զարթեցան քնից. և Նադդին դուրս
եկաւ խրճթից նախ իմանալու, թէ արդեօք
ինչէն անում գիւղումը: Զարմացաւ նա,

երբ տեսաւ, թէ թագաւորումէ այն տեղ լուութիւնը: Անհամբերելի եղաւ ամէն շարժողութիւն, երբ որոնումէր ստուգելու: Դա զարմացրեց Ամերիկացուն—Նադդինին, որ և սկսաւ ուշադրութեամբ նայելու ամէն խրճթին, և չտեսաւ ոչ մի կենդանի գոյացութիւն. բացի երկու շներից, որոնք տաքանումէին արեգակի տակ: Արագապէս ընթացաւ նա այն տեղ, ուր երեկոյեան ամրափակեցին վենոնդին, և այնտեղ չկար ոչ ոք:

— Ստուած իմ, աղաղակեց Նադդին.— Սրթիկ տարել են նրան պատժելու:

Նադդին սկսաւ ականջ դնել, և անտառի մէկ կողմում հեռի լսելի եղաւ խուլ ձայն և դիմեց դէպի այն կողմ: Ավգուստինն էլ վեր կացաւ կասկածի մէջ, չիմանալով թէ ինչ անէ, յանկարծ լսեց աղաղակ անտառի մէջ, և վազեց, չկանգնելով ճանապարհին, որովհետև վախենումէր թէ ուշանայ: Աղաղակը աւելանումէր, և լսվումէին կանանց, երդի և երեխայոց լացի ձայներ: Ուստի առանց հանգիստ տալու իւր շնչին, արագապէս վազումէր, և ահա մի քանի բոպէում բացվեցաւ նորա առաջև զարհուրելի տեսարան:

— Ս.ՅՊ հրապարակի մէջ ժողոված էր մեծ բազմութիւն: Զօրականները կատարեալ զինուորված, շարժումէին դամահավդները, կանայք և երեխայք աղաղակումէ և երգումէին, ամէնքի աչքերը նայումէին դէպի մէկ նշանակեալ տեղ: Ծառերի ետևից և բազմութեան պատճառով Ավգուստինը չէր կարողանում տեսնել, թէ ինչ է լինում. վերջապէս մի կերպով առաջ գնաց: Ընդարձացաւ, թուլացաւ նորա սիրտը, և արիւնը դադարեցաւ երակների միջում, երբ տեսաւ մէկ բարակ ծառից, որ գտանվումէր հրապարակի մէջ, կապված Վենոնդան այնպէս

ամուր, որ միայն կարող էր գլուխը շարժել։ Տան քայլ նրանից հեռի կանգնած էին մի քանի մատաղ գլուխներ, որոնք ծիծաղելով և ծաղը անելով ձգումէին իւրեանց գամակավոր դէպի այդ դերին, և աշխատումէին աւելացնել նորա չարչարանքը. նոքա հարկանումէին աւելի գլխին, և պիտի զարմանաս դրանով աւելի, որ ոչ մի հարուածք չէր խորտակում նորա գագաթը։

— Ամբոստինը վայրենի ձայնով յարձակվեցաւ դէպի առաջ, և զարհուրելի խաղը խանգարվեցաւ մի վայրկենում։ Տեսնելով Մատորէին, ընթացաւ դէպի նա. և ասղաղակեց.

— Ինչու համար է այդ անգութ հարուածը, ինչու համար են կապել Վենոնդին այդ ծառից։ Եւ կարծեմ ամօթ է ուրախանալը մեկ անզէն, մեկ թշուառ անձի տանջանքի վերայ։

Վայրենաբարոները լռեցին, նայելով ցրուութեամբ սպասակադէմ բժշկի խռովութեան վերայ, և Նադդին պատասխանեց իւր ընկերոջ.

— Վճռված է, որ Վենոնդան չարաչար տանջվի զօրականների ձեռքով։ Դեռ մի քիչ ժամանակ պէտք է ծաղը անեն և ուրախանան նորա վերայ, յետոյ կ'այրվի նախարուկի մէջ։ Այդ պատիժը թէպէտ սաստիկ է, բայց արժանի է նրան, որովհետև երկու անդամ կամեցել է զրկել մեզ կեանքից։

— Ո՛չ, այդ անարդարութիւն է։ Ուրեմն վայրենաբարոները մտադիր են վրէժխնդրութեան և սպանութեան համար, բայց մենք չենք կամենալ տեսնել այդ մարդու մահը, որը մեզ համար հէնց երկիւղալի է։ Նորա հայրը մեզ ընդունել է որպէս բարեկամ, տուել է մեզ ապաստանարան, կառավարել է մեզ այսքան ժամանակ, և մենք դրանց փո-

խանակ հատուցանենք նորա որդուն չարչարանք և պատիժ մահու: Ես պիտի պահանջեմ Մատորէից, որ ներէ նրան:

— Զգոյշ կաց, ասաց Նադդին,— Հնդկացիք կամակոր են, դու միայն կ'շարժես նոցա բարկութիւնը և ոչ թէ կ'փրկես դատապարտուածին, այլ և մեզ համար կ'հասցնես պատիժ:

— Թող նոքա սպանեն ինձ, ասաց Ավգուստինը, ես չեմ կարող տեսնել Ունկասի որդու չարչարանքը, ես պարտաւոր եմ փրկել նրան:

— Որ նա կրկին թակարթ պատրաստէ քեզ համար և սպանէ քեզ:

Ես դոցա համար չեմ մտածում, ես նեբել եմ նրան ամէնը... նա չպէտք է մեռնի:

Այդ խօսքերովը պատանին — Ավգուստինը յարձակեցաւ դէպի ծառը, իւր ձեռին բռնած ունենով որսորդական դանակը: Զօրականները ուրախութեամբ աղաղակեցին, մտածելով, թէ նա կամենում է վրէժխնդիր լինելու իւր թշնամուց, վենոնդան էլ հէնց այդ էր երևակայում, որի աչքերը լցուել էին արիւնով և աղաղակում էր վայրենի ձայնով.

— Ո՞վ սպիտակ շուն, դու համարձակվում ես մօտենալ դայլին միայն այն ժամանակ, երբ նա կաշկանդված է, դէհ մօտացիր, և սպանիր ինձ:

Ավգուստինը չ'պատասխանեց այդ նոր անարգանաց էլ, նա կտրեց պարանը, և ասաց, գնա՛ հօրդ մօտ, շուտ արա՛, մինչ դեռ ժամանակ կայ:

Վայրենարարոն յաղթվեցաւ այդ վեհանձնութենովը, և չ'կարաց ուշաբերիլ, նայելով անքթթելի աչքով իւր թշնամու Ավգուստինի վերայ, որի աչքերում չէին երևում ամենևին չարութիւն ինչ և ատելութիւն:

— Փախիր դէպի անտառը, ասաց Ավ-գուստինը.— քեզ չեն փախցնիլ, շուտ արա.. Մի ուշանար . . .

Վենոնդան արագապէս նկատեց իւր շուրջը, և օրքան կարողութիւն ունէր, մէկ յանկարծ նետվելով թռաւ ծառից, ու ընկաւ անտառի մէջ. բայց պիկոտիները տեսնելով թէ ինչպէս ընկաւ նրանից պարանը, հասկացան թէ բանը ինչուն է, խսկոյն վազեցին նորա ետևից :

Ավգուստինը յուսով էր, թէ այդ դեղավարը կ'աշխատէ թաղնուիլ իրան հետևողներից. բայց նոքա նրանից լաւ էին տեղեակ անտառին : Ուղղակի փախչելը անկարելի էր, պատճառ թփերը և ծառերը այս տեղ այն տեղ միացած էին : Մէկ շաղարաձի մէջ փախստականը շաղապատված բռնուեցաւ. և նրան բերին հէնց նոյն ծառի մօտ, և կապեցին կրկին, որպէս նախատանաց սիւնից :

Ավգուստինի վիհանձնութիւնը այս անգամ զուր կորաւ : Նա գիտեց այն ժամանակ գլխաւորի մօտ, որ խնդրէ նրան կրկին Վենոնդի համար :

— Զար գայլը պէտք է պատժվի, ասաց Մատորէն.— Նա վիրաւորել էր քո ընկերոջ : և մենք խոստացել ենք վրէժխնդիր լինելու :

— Ես չեմ կամենում վրէժխնդրութիւն, ասաց Ավգուստինը վառված.— ես ներում եմ նրան, նոյնպէս ընկերս : Ուստի չպէտք է շարաբերվի այն խեղճը : Նա մեզ ոչինչ չէ արել... Ընծայեցէք ինձ նրան :

— Սպիտակադէմ եղբայրը չափազանց բարի է : Նա կրժշկէ հիւանդներին, և չէ կարող վրէժխնդիր լինիլ անպատուութեան համար : Իմ զօրականները առել են դամահավգները, և չար գայլը պիտի մեռնի : Բաւական է եղբայր, իմ ականջները փակված են :

— Ուրեմն բաց, մէկ էլ նորունց աղաղա-

կեց Ասվածամինը յուսահատութեան մէջ.— Ես փրկել եմ քո որդուդ կեանքը, նոյնպէս և զօրականներիդդ շատերին, ես չեմ վեր առել ոչինչ ընծայ. որովհետև մեծ հոգին արդեւնքումէ վեր առնել նոցանից, որոնց պարգևվել է առողջութիւն: Պեկոտիներդ 'ի հարկ է չէք կամենալ ապերախտ լինիլ: Ես պահանջում եմ ձեզնից միայն այդ Դեղավարի կեանքը: Շատ մարդկանց փրկութեան փոխարէն, ես խնդրումեմ միայն մէկ վեհոնդի փրկութիւնը:

— Այդ չէ կարելի, ասաց զլխաւորը.— Պեկոտիները կ'տան քեզ ամէն բան, ինչ որ ունին, գնա ինքդ նոցա բնակարանը և ընտրիր, ինչ կամենում ես, սակայն չար գայլը մեզ տուած է, մենք վճռելենք, նա պէտք է մեռնի:

Այդ խղճուկ մատաղ պատանին տեսնելով, որ չէ կարողանում յաղթել վայրենաբարոներին, սկսաւ մտածել, թէ նոքա համարումեն իրան մեծ կախարդ, ուստի նա կարող էր վախցնել դրանով, ու գտնել մի ինչպիսի և իցէ օգուտ նորա համար: Բայց ամենևին չէր կամենում գցել իրան ստութեան մէջ, թէև ընդհանրապէս հաւատային նորա գերբնական զօրութեանը և կ'կատարէին նորա խնդիրը. որովհետև շատ վախենում էին նոքա հիւանդութենից:

Ասվածամինը հեռացաւ Մատօրէից մտածելով, և մտեցաւ վենոնդին, ընդգրկելով նորան, աղաղակեց դեպի կարմրակաշիները, որոնք ժողոված էին ծառի մօտ:

— Այդ Դեղավարը կ'պատկանի ինձ: Եթէ գուք կամենում էք անպատճառ սպանել նորան. ինձ էլ նորա հետ միասին սպանեցէք, և այն ժամանակ ձեզ վերայ կը խօսին ուրիշ ազգերը, թէ նոքա երախտամոռ են, և վատ նքա զշուն: Շունը չէ կը-

ծում այն ձեռը, որ կերակրում է նորան, բայց պեկոտիները սպանում են իրանց բարեկամին, որ փրկեց նորանց հիւանդութենից և մահից:

Թնդաց բարկութեան աղաղակ, և զէնքերը բարձրացան այդ վատահ պատանեակի գլխի վերայ: Նա համարեց արդէն, թէ հասաւ իւր վերջին վայրկեանը, սակայն իսկոյն Մատորէն բարձրացրեց իւր ձեռը, զօրականները հեռացան ծառիցը, և սկսաւ ասել բարձրաձայն.

— Սպիտակ եղջիւրը բարեւ գտոնց: Ձար դայլը կ'պատկանի նորան: Պեկոտիների անունը չպէտք է ապականվի ապերախտութեամբ:

Սվդուստինի դէմքը փայլեց ուրախութեամբ, զօրականները շուտ չհամաձայնվեցան իւրեանց գլխաւորի կարծիքի հետ, որովհետև դոռոզութիւնը նոցա մէջ սաստիկ էր, քան ուրիշ զղացմունքները, սասաիկ էր նոյնպէս նոցա մէջ ցանկութիւնը տեսնելու այն թշուառականի պատիժը: Նոքա վախեցան ամենից աւելի ուրիշ ազգերի յանդիմանութիւններից և իրանց ծաղր անելուցը:

Նոքա վախեցան նմանապէս և սպիտակ կախարդի զօրութիւնից, որ փախցնում է հիւանդութիւնները, ուրեմն իրանց էլ կարող է վնասել:

Սվդուստինը չ'կորցնելով ժամանակ, բացեց վենտղին, և դարձաւ դէպի զօրականները, որոնք և նայում էին սոքա վերայ խոժոռեալ դէմքով, ու ասաց:

— Պեկոտիները ազնիւ են, և վեհանձն: Բնութիւնը կամ ձեր մեծ Մանիտի հոգին կ'պարգևատրէ ձեզ առատօրէն հնձով և հարուստ որսով: Կարմրախշիներդ մի ազգէք, և սպիտակները կ'յարգեն ձեզ, կը զովեն ձեր վարմունքը, և ձեր բարեկամութիւնը

կ'գնահատուի ամէնքից։ Դուք կամեցաք վնէժ-
խնդիր լինելու սպիտակ եղբօրը. բայց նա գու-
նատված խնդրեց ճնշանից ընծայելու իրան այդ
գերիի կեանքը. շնորհակալ եմ, որ դուք կա-
տարեցիք խնդիրս։ Քաջ Պեկոտիները կարող
են միամիտ լինել, որ սպիտակ բժիշկը կ'բը-
ժշկէ նորանց ամէն հիւանդութենից, և Մա-
տորէի զօրականները ամէն ժամանակ կ'լի-
նին զօրեղ և առողջ։

Այդ խօսքերը շողոքորթեցին վայրենա-
բարոների անձնասիրութիւնը, և շատ մեծ
տպաւորութիւն գործեցին, և հեշտութեամբ
գրաւեցին նրանց այս բարձր գովեստները։

Անտառի մէջ թնդացին ուրախութեան
աղաղակներ։ Բարկութիւնը անցաւ այնպէս
շուտով, ինչպէս և մահուան երկիւղը դա-
տապարտվածի համար։

Կապուած Վենոնդան դեռ կանգնած էր,

և չէր շարժում տեղից, բայց Ագուստինը
ասաց նորան քաղցրութեամբ.

— Դու ազատ ես, գնա ուրեմն հօրդ մօտ,
և ուրախացրու նորան։

— Վայրենաբարոն—Վենոնդան, ցամաքե-
ցնելով իւր սպիտակ աչքերի վերայ եղած
արտասուաց շիթերը, դարձաւ դէպի Պեկո-
տիները, բարձրացրեց ձեռը, և խիզն թա-
գաւորեց լռութիւնը։ Ամէնքը հասկացան,
որ այդ գերին կամենում է հարկաւոր բան
հաղորդել նրանց։

— Վենոնդան պարտաւոր է խոստմանե-
լու ամէնքիդ առաջև, որ նա չար էր և ան-
արդար, ահա այսպէս սկսաւ Ունկասի որ-
դին, — Ես ատել եմ սպիտակադէմքերին,
բայց նոքա սիրել են ինձ։ Սպիտակադէմքերը
սպանել էին եղջերուին, որի եռևից ընկ-
կել էի ես որսալու, և երդում կերայ սպա-
նելու նորանց. որ ուրիշ սպիտակադէմ

մարդիկը չգան Աղի Ծովի այն կողմից, և չառնեն մեզնից անտառը: Սպիտակադէմ-քերը խորամանկ են, և շատ չարու-թիւններ գործ դրին Ընդկացւոց դէմ, բայց այս մեծ բժիշկը և իւր ընկերը բարի մարդիկ են: Ես հաւատ չեմ ընծայել նոցա մինչև ցայժմ, և բարկացել եմ, որ ընդու-նելին նորանց Գելավարների բնակարաններու մէջ: Մի օր պատահեցայ նորան անտառումը և կամեցայ սպանել, բայց նետը հարեւանցի անցաւ. հենց այդ րոպէումը պանտերան պատրաստ էր պատառելու ինձ, բայց սպի-տակ բժիշկը սպանեց այդ գազանին, զրանով դեռ ևս հաւատ չընծայեցի նորան: Ցեռոյ հիւանդացան հայրս և շատ զօրականներ. այդ սպիտակ կախարդը բժշկեց նորանց, և ինձ: Բայց ես ըստ ամենայնի մեացի չարու-թեանս մէջ, և ուրախացայ, երբ պեկոտի-ները հրաւիրեցին նորան իրանց մօտ: Մնաց

մեզ մօտ նորա ընկերը, ես կամեցայ սպա-նել նորան: Պոկոտիները յայտնեցին մեզ պա-տերազմ, իսկ հայրս չկամեցաւ արիւնհե-ղութիւն, և մատնեց ինձ ձեր ձեռքը: Ես պատրաստ էի չարաչար մեռնելու ինչպէս մէկ զինուոր, բայց սպիտակադէմ բժիշկը փրկեց ինձ: Արդէն իմ ատելութիւնս անե-ւութացաւ: Այսուհետև ես կ պաշտպա-պանեմ մեր աղջին, արդարև սպիտակադէմ-քի միջնորդութեամբը: Սպիտակադէմքերը յաղթեցին ինձ վեհանձնութիւնով, ուստի խնդրումեմ ներողութիւն նոցանից:

Վերջին խօսքերը այդ վայրենաբարոն այնպիսի զգացմունքով, այնպիսի խոնարհ կերպով արտայայտեց, մինչև Ավդուստինը թաւաւ դէպի նորա գիրկը և ասաց: — Դու իմ ընկերն ես ... իմ եղբայրն ես:

Զօրականները շարժվեցան այս տեսա-բանովը, և մի քանիսի աչքերում երևեցան

արտասուք։ Վենոնդան ընդդրկելով Ավգուստինին, որ երբեմն թշնամի էր համարվում, ասաց։

— Սպիտակ եղբայրը յետ կդառնայ ինձ հետ Դելավարների մոտ, և յետոյ իւր մօր ետևից, կ'երթ և կ'բնակցնէ այնտեղ, Վենոնդան էլ կ'սիրէ և կ'պահպանէ նրանց։

— Ամենքը բաւականացան այդ գործոյ վերջաւորութենով, իսկ Ավգուստինը ամենից բախտաւորը եղաւ, որովհետև յաջողեցաւ նրան յաղթելու ատելութեան սիրով և վեհանձնութեամբ, և թշնամուն հաւատարիմ բարեկամ շինեց իւր հետ։ Արդէն նոցա առաջև բացվեցաւ ապագայ ժամանակը ամենացանկալի աշխարհում, և նա երևակայում էր իւր մօրը և քոյրերին բոլորովին անհոգ։

Նադդին մօտեցաւ նրան շարժված, և ասաց—

— Ընկեր իմ, դու հենց կատարեալ կախարդ ես, որովհետև չտեսնված բան ես գործում։

— Հնարքը կուզէ՞ էարերին. — շատ հեշտ է Նադդի։ Հարկաւոր է գործ դնել սէր և բարութիւն — ապա չարութիւնը և ատելութիւնը կ'յաղթվին։

— Ես ամենևին չէի կարծում, ասաց Նադդին, թէ դու կ'յաղթես Վենոնդին, ահա արդէն տեսնում եմ, որ քեզ համար դժուար բան չկայ։ Դէհ գնանք Դելավարների մոտ։

Մինչև գիշեր նոքա երեքը միասին հասան Դելավարների բնակութեան տեղը։ Պեկոտիներն էլ ճանապարհ զցեցին նոցա բարեբանելով, ցանկանալով և խոստանալով յաւիտենական բարեկամութիւն։ Ունկասի ուրախութիւնը չափազանց էր, որովհետև նա արդէն լաց էր լինում իւր որդու վերայ։

Զօրականները, կանայք և երեխայք արտա-
յայտում էին իւրեանց հիացմունքը աղա-
պակով և արտասուօք, երբ Վենոնդան պատ-
մում էր, թէ ինչպէս ապտակեցաւ տաժա-
նելի մահից: Ավգուստինը հինց առաջուց
գրաւել էր ամենքի սէրը, իսկ այժմ նոքա
չիմացան, թէ ինչպէս արտայայտեն իրանց
առաւել սէրը և յարգանքը:

Մատաղ Ֆայիտան ամենից առաւել էր
շարժված: Նա լաց էր լինում և ծիծաղում
ուրախութենից, և եթէ իւր եղբօր փրկիչը
ուրախացնում էր իրան ամենասաստիկ, ա-
պա օրքան աւելի ուրախանում էր նրանով,
որ Վենոնդան և Ավգուստինը բարեկամացել
էին:

Ավգուստինը շուտով սկսաւ հոգալ իրա
համար բնակարան շինելու, բայց Նաղդին
ասաց նրան.

—Դնա, իմ ընկեր, Եւրոպա և մի՛ մտա-

ծիր դու ոչ մի բանի համար: Ես կենամ
այստեղ, և քո վայրենաբարոյ բարեկամնե-
րիդ օգնականութեամբը կ'կառուցանեմ
քեզ համար հոյակապ բնակարան լճի ա-
փումը, բայց 'ի դրանից, մնք կաշխատենք
յստակել դաշտը և սերմել, այնպէս որ երբ
դու կ'դառնաս, կ'տեսնես այն կատարեալ
ամէն յարմարութիւններովը, և քո մայրը
ու քոյրերդ այստեղ դեղեցիկ կ'կենցաղա-
վարեն: Դու էլ ուրիշ գործ չունիս այս տեղ,
ուրեմն ճանապարհ ընկիր շուտով:

Արդարև, Ավգուստինը պատրաստուեցաւ
ուղևորվելու դէպի իւր ընտանիքը: Նա յանձ-
նեց բոլորը Նաղդիի, ցոյց տուեց, թէ ուր պի-
տի կառուցանվի տունը, և ինչ կարգադրու-
թեամբ պէտք է վարվի Դելավարների հետ
Ավգուստինը հասաւ Նիւ-Եօրք, այնտեղ որոշ-
նեց նաւ Եւրոպա գնալու համար, ու նորից
ընկաւ Ովկիանոսի երեսը: Ճանապարհոր-

դութիւնը մինչև Բրեմն յաջողակ եղաւ:

Սարոտը հանդիպեցաւ իւր մատաղ բարեկամին, որին որդու պէս սիրում էր, և լսեց Ավգուստինի պատմութիւնը, որ պատմում էր իւր կենցաղավարութեան մասին վայրենաբարոների հետ: Ծեր Նաւապետ Ստեֆինդին նա չ'տեսաւ, որովհետև դնացել էր նաւով Գոպենհագէն:

—Նա շուտով կ'դայ, ասաց Սարոտը.— Եւ երբ դուք կ բերէք այստեղ ձեր ընտանիքը, նա անշուշտ կ'տանի ձեզ Ամերիկա: Եւ ես ոչինչ վարձ չեմ ստանալ ձեզնից, որովհետև ձեզ իմն եմ համարում:

Թէպէտ Ավգուստինը հրաժարվում էր այդ նոր բարեգործութենից, բայց Սարոտը ասում էր, թէ հարկաւոր չէ խօսել դորա համար. և դեռ դաղթականների համար հարկաւոր է բաց ի դրանից շատ պաշար դնել, պատրաստել. որովհետև շատ բան չէ

կարելի գտնել վայրենաբարոների մէջ:

—Այո, ես կամենում էի խորհուրդ տեսնել ձեզ հետ, աւելացրեց Աւգուստինը, — դուք լաւ հմուտ էք . . .

—Մի հոգար ոչ մի բանի համար, Սարոտը այսպէս ընդհատեց Ավգուստինի խօսքը և ասաց — ես գիտեմ, ինչ որ հարկաւոր է դաղթականների համար Ամերիկայում. նաւի միջում ամէնը պատրաստ կլինի ձեր գալստեան ժամանակը, ուրեմն չդնէք ոչինչ, միայն բերէք այստեղ ձեր մօրը և քուրերուդ, ես կամենում եմ ծանօթանալ և նոցա հետ:

Գոհանալով այդ ողորմած և բարի հարուստից, Ավգուստինը փութացաւ դէպի իւր հայրենիքը, և նորա սիրտը սաստիկ հարկանվում էր, երբ որ նա անցաւ այն տուների դռներից, որոնց մէջ կենում էին իւր ազգականները: Ցիսութեան ուրախաւ-

թիւնը շարունակելի եղաւ։ Ավգուստինի մայրը չէր կշտանում իւր սիրելի որդւոյն փայփայելուց, և պատմութեանն էլ վերջ չէր լինում։

Եւ որովհետև պէտք էր պատրաստվել հեռի ճանապարհ գնալու, ուստի Ավգուստինը աշխատեց վերջացնել ամեն հաշիւները իւր հայրենեաց հետ, որովհետև պէտք է ամենեին տեղափոխվէր նոր աշխարհ։ Նոքա երբ որ հասան Բրեմեն, անցուցին մի քանի օր այնտեղ Սորոտի մօտ և նաւապետ Սամսոնը պատրաստվեցաւ տանելու նորանց Ամերիկայ։ Դուրս գալուց առաջ նա ասաց Ավգուստինին.

Լսիր դու պատանի, մեզ հետ գալիս են եօթն դաղթական ընտանիք։ Նոքա խեղճ մարդիկ են, և չեն կարող գնել երկիր, բայց կարող են գործել քո երկիրը, և կլինին քո հպատակները։ Կարծեմ, այդ մարդիկը

մաքուր գործակատար են, և դուք դոցանով կբաղկացնէք մի զեղեցիկ դաղթականութիւն։

Ավգուստինը շատ ուրախացաւ, որ իրա հետ գնում են հայրենակիցներ, և շուտով նաւը բեռնաւորված ամեն հարկաւորութեամբ դաղթականների համար՝ լոցաց Ովկիանոսի վրայով։ Աւելորդ է ասելը, որ Սորոտը ընծայեց նորան ամեն տեսակ ծաները ընծաներ, որովհետև փրկել էր նորա աղջկանը — Լիւսիային ջրից։

Անցաւ տարիի չափ այն օրից, երբ Ավգուստինը թողել էր Դեղավարներուն։ Մի զարմանալի ամառվայ օր էր, երբ մօտեցաւ նա ըմին և տեսաւ նորա ափումը մեծ և հոյակապ տուն և ցանկապատեալ դաշտ և յաւելուած շինութեան վերայ։

— Այդ Նադդիի գործն է, ասաց նա իւր մօրը։

— Ո՛չ, իսկոյն պատասխանեց բարձրաձայն իւր ընկեր Նադդին, վազելով դէպի նորանց առաջը. — Այստեղ գործել են ամեն դեղավարները, և ամենից առաւել Վենոնդան: Պեկոտիներն էլ նոյնպէս շատ օգնել են:

Աւգուստինը կենցաղավարեց բախտաւորապէս, շրջապատած իւր ընտանիքով, գաղթական ժողովրդով և կարմրակաշիներով. — Այդպէս վերջացրեց պապը իւր պատմութիւնը: Նա գործում էր միշտ բարութիւն իւր դրացիներին, ներում էր չարութեանը. և սիրում էր իւր թշնամիներին:

Յ. Միրզաբէկեանց:

'ի 14—Դեկտեմբեր. 1868 ամ.
'ի Շամախի:

355

0004488

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0004488